



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Սպասելով Նոր Վարչապետի Գալուստի

Վերջին շրջանին տարածուող շուկայում Չայնայի վարչապետ Յու Վանցանի պաշտօնը հեռացման մասին, ըստ երեւոյթին, իրականութիւն դառնալու վրայ են: Չորեքշաբթի երեկոյան, այս տողերը գրելու պահուն, «Ռոյթըրզ» միջազգային մամուլի գործակալութիւնը երեւանէն կը հաղորդէր, որ յաջորդօրը Սեպտեմբեր 8-ին տեղի ունենալիք իշխող Չայնայի վարչապետ Յու Վանցանի պաշտօնը գործարար Կարէն Կարապետեանը նշանակելու հարցը:

Վարչապետի պատերազմի արդիւնքները, Արցախեան հարցով միջազգային ճնշումները, երկրի տնտեսական անկումը ու ասոնց վրայ գումարած յուլիսեան դէպքերը, որոնք ստացան ժողովրդային ապստամբութեան բնոյթ, անել վիճակի առջեւ դրած են իշխող համակարգը:

Վարչապետի փոփոխութեամբ ժողովրդային դժգոհութիւնը մեղմացնելու քաղաքականութիւնը նորութիւն չէ Չայնայի իշխանութեան վերնախաւին համար: Սակայն, ներկայիս կը տիրէ այնպիսի իրավիճակ, որ վարչապետի անձի փոփոխութեամբ կարելի չէ յաղթահարել առկայ դժուարութիւնները, թէկու՞ ժամանակաւոր:

«Սասնայ Շոքեր» խումբին կողմէ հնչած պահանջներու շարքին կար նաեւ վստահութիւն ներշնչող ազգային համաձայնութեան կառավարութիւն կազմելու հարցը: Այս մասին հետազգային անդրադարձաւ նաեւ նախագահ Սերժ Սարգսեան, սակայն չյստակեցնելով, թէ երբ կը նախատեսուի նման կառավարութիւն մը: Չայնայի վարչապետական կուսակցութեան շրջանակները, այդ կառավարութեան կազմութիւնը կը յետաձգէին մինչեւ յառաջիկայ գարնան տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւնները:

Այժմ, երբ նոր կառավարութեան հարցը սեղանի վրայ է, լաւագոյն տարբերակը պիտի ըլլար, լայն լիազօրութիւններով օժտուած ազգային միասնականութեան կառավարութեան մը կազմութիւնը, որուն մէջ ներկայացուած ըլլալ են իշխանութեան եւ ընդդիմադրութեան ներկայացուցիչները, որպէսզի ճամբայ հարթուի նաեւ ազատ եւ արդար ընտրութիւններու կայացման:

Գիտենք, որ այս նպատակի իրականացումը այդքան ալ դիւրին չէ՝ կողմերուն միջեւ տիրող անվստահութեան պատճառաւ, սակայն առաջին փորձը պէտք է կատարել այսօր իսկ, մեկնելով երկրի գերագոյն շահերէն:

«ՄԱՍԻՍ»

«Մարդկային Իրաւանց Հսկիչը» Հայաստանի Իշխանութիւնները Կը Մեղադրէ Միջազգային Չափանիշերը Խախտելու Մէջ

Մարդկային Իրաւանց Հսկիչը (Human Rights Watch) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ գծով փոխտնօրէն Ջեյն Պիւքենեն, անցեալ ամիս Հայաստան կատարած իր այցելութեան առթիւ զեկոյց մը պատրաստած է, անդրադառնալով յուլիսեան բողոքի ցուցերուն: Հրապարակուած զեկոյցին մէջ կը նշուի թէ, Հայաստանի իշխանութիւնները միջազգային չափանիշերու խախտում կատարած են, տասնեակներու ձերբակալմամբ եւ անոնց մէջ 40-էն աւելին՝ զանգուածային անկարգութիւններու մեղադրանքով կալանաւորելու մէջ:

Ազատագրութեան մէջ յատկապէս կը լիշուի, «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչներ՝ Յովսէփ Խուրշուդեանի, Արմէն Մարտիրոսեանի եւ Դաւիթ Սանասարեանի, անոնց, ինչպէս նաեւ «Նոր Հայաստան» շարժման ներկայացուցիչ Անդրիաս Ղուկասեանը: Հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութեան փոխտնօրէնը կ'աւելցնէ, որ Օգոստոսի կէսերուն անոնցմէ երեքը «բողոքարկման իբր արդիւնք, բարեբախտաբար, դատարանի կողմէ ազատ արձակուեցան»՝ գրաւի դիմաց», սակայն, այդ մէկը չի բաւարարուած Ղուկասեանի պարագային,

քանի որ ան յայտարարած է, որ ազատ արձակուելէ ետք, մտադիր է շարունակել խաղաղ քաղաքական գործունէութիւնը:

Ըստ Պիւքենենի՝ բողոքի ցուցերը խաղաղ էին, մասնակիցներու կողմէ բռնութեան միջոցներ չկային, որ ունենար «զանգուածային անկարգութիւն» անուանումը:

Human Rights Watch-ի փոխտնօրէնը կը նշէ, որ Անտրէաս Ղուկասեանին եւ միւս երեք առաջնորդներուն կը սպասէ դատավարութիւն՝ «զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու» լուրջ քրէական մեղադրանքով՝ յուլիսեան բողոքի ցուցերու ընթացքին, որոնք սկսան, երբ գինուած խումբը մը Յուլիս 17-ին գրաւեց ոստիկանութեան ծառայութեան գունդի մէկ տարածքը:

«Մինչեւ Յուլիսի 31-ը, գինեալներու յանձնուելը, անոնց հասարակական աջակցութիւնը եւ կառավարութեան դժգոհութիւնը վերածուեցաւ բողոքի շարժման», - գրուած է հաղորդագրութեան մէջ:

«Ազատագրութեամբ պէտք է ըլլալ վերջին միջոց, այլ ոչ թէ դիւրին եղանակ, որչափ հայաստանեան իշխանութիւնները անարդարացիորէն պատժեն իրենց քննադատներուն», կը յայտնէ Human Rights Watch-ի փոխտնօրէնը:

Ամերիկայի Դատարանը Յայտարարած է.

«Ուժային Կառոյցները Պէտք Զէ Օգտագործել,
Որպէս Քաղաքացիները Վախցնելու Միջոց»

Հայաստանի մէջ ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպան Ռիչըրտ Միլս, Եւրոպական Միութեան պատուիրակութեան գործերու ժամանակաւոր հաւատարմատար՝ Անտրիաս Խալուպովայի հետ միասին հանդիպած է Հայաստանի Հելսինկի ինքնիշխանութեան կոմիտէի նախագահ Ալեքսի Իշխանեանին հետ: Հանդիպման ընթացքին Ամերիկայի դեսպանը ըսած է, որ ուժային կառուցները եւ կառավարութիւնը պէտք է հասարակական անվտանգութիւնն ու կարգը պահպանելու իրենց պարտաւորութիւնը որպէս միջոց օգտագործեն՝ վախցնելու համար Հայաստանի քաղաքացիները:

Դեսպանը աւելցնելով ըսած է. «Վերջին երկու շաբաթներու ընթացքին Հայաստան մէջ շեշտադրուած է այն կազմակերպութիւններու կարեւորութիւնը, որոնք կը զբաղուին մարդու իրաւունքներու պաշտպանութեան ու հսկողութեան հարցերով, որոնցմէ մէկն ալ Հայաստանի Հելսինկի քեան կոմիտէն է: Ինչպէս Հելսինկի քեան կոմիտէն, այնպէս ալ դեսպանատունը խորապէս անհանգստացած են էրեւոնի դիմակայութեան օրերուն ոստիկանութեան կողմէ ցուցարարներու



Ամերիկայի դեսպան Ռիչըրտ Միլս

նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման ու իրենց աշխատանքն իրականացնող լրագրողներուն թիրախաւորելու մասին արժանահաւատ հաղորդումներով»:

Ալեքսի Իշխանեան ներկայացուցած է Հելսինկի քեան կոմիտէի իրականացուցած աշխատանքները, յատկապէս, կոմիտէի կողմէ վերջին երկու-երեք շաբաթներու ընթացքին

Անժելա Մերքել Պատրաստ Զէ Հրաժարելու Հայոց Ցեղասպանութեան Բանաձեւէն

Գերմանիոյ վարչապետ Անժելա Մերքել, իր գլխաւորած Քրիստոնեայ-Դեմոկրատական միութիւն կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավարին ըսած է, որ չի հրաժարիր Պոլստեսթակիի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւէն, որ Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններուն մէջ լարուածութեան պատճառ դարձած է: Այս մասին կը յայտնէ «Ռոյթըրզ» լրատուական գործակալութիւնը, վկայակոչելով տուեալ հարցով իրազեկուած աղբիւրներ:

Քրիստոնեայ-Դեմոկրատական միութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վոլքեր Քաուզեր կուսակցութեան անդամներու հետ հանդիպման ժամանակ փոխանցած է, որ գրուեցած է Մերքելի հետ եւ կանցըրը ընդգծած է իր դիրքորոշումը, «Ռոյթըրզին» յայտնած է հանդիպման մասնակցած աղբիւրը:

Քաուզեր նշած է նաեւ, որ թէեւ Մերքելը Յունիսի 2-ին Պոլստեսթակի մէջ ներկայ չէ եղած բանաձեւի քուէարկութեան, սակայն, աւելի կանուխ կուսակցական հանդիպման քուէարկած էր նախագիծի օգտին:

Յիշեցնենք, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չավուշօղլու, որպէս գերմանացի օրէնսդիրներուն ինձիւր լիքի ռազմակայան այցելելու պայման նշած էր, Պոլստեսթակի ընդունած բանաձեւէն Գերմանիոյ կառավարութեան հրաժարումը:

Մայր Աթոռը Հինգ Հարիւր Հազար Տոլար Փոխանցեց Արցախին

Սեպտեմբեր 6-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մալաթիոյ Պատրիարքի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, Ստեփանակերտի մէջ իր աշխատանքը սկսած է Գերագոյն հոգեւոր խորհուրդի հերթական ժողովը:

Ժողովի բացման, Գ.Հ.Ս. հոգեւորական եւ աշխարհական անդամներուն հայրապետական իր օրհնութիւնն ու պատգամը տուած է Նորին Սրբութիւնը՝ մասնաւոր իր գնահատանքը փոխանցելով Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ՝ Բակո Սահակեանին եւ Արցախի թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Պարզեւ արքեպիսկոպոս Մարտիրոս-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Շանտաժով Գերմանիայի Յետ Չի Կարելի Խօսել

ՄԵՏԱՔՄԻԱ ԸԱԼՈՒՄՑ

Հայոց Յեղասպանութեան հարցը դարձել է գերմանա-թուրքական յարաբերութիւնների ճշգրտման ալտերնատիվ ամենագլխաւոր թեման:

Գերմանիայի կառավարութիւնը վերջակէտ դրեց թուրքական շանտաժին՝ յայտարարելով, որ իրեն հեռու չի պահում Բունդեսթագում ընդունուած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւից, միաժամանակ նշելով, որ բանաձեւը իրաւական պարտադիր ուժ չունի:

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը իր կուսակցութեան խորհրդարանական առաջնորդների հետ հանդիպմանը յայտարարել է, որ իրեն հեռու պահում է իր պահումը Բունդեսթագում ընդունուած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւից, որի պատճառով լարուածութիւն առաջացաւ թուրքիայի հետ յարաբերութիւններում: Մերկելի այս յայտարարութեան մասին յայտնել են հանդիպման մասնակիցները:

Ինչպէս յայտնի է, Բունդեսթագի բանաձեւերից յետոյ թուրքիան չի թոյլատրում գերմանացի պատգամաւորներին այցելել Ինջիրլիքի ռազմակայանում գտնուող գերմանացի 250 զինծառայողներին: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չաւուշօղլուն ասել էր, թէ այցելութեան թոյլտուութիւն ստանալու համար

Գերմանիայի կառավարութիւնը իրեն պէտք է անջրպետի բանաձեւից:

Գերմանիայի ԱԳ-ի խօսնակ Մարտին Շեֆերը ամենօրեայ բրիֆինգում ասել է, «Որեւէ խօսակցութիւն չի կարող լինել այն մասին, որ Գերմանիայի կառավարութիւնը իրեն հեռու է պահում Բունդեսթագում Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող մասին բանաձեւից»: «Գերմանիայի արտաքին գործերի նախարարը պաշտպանում է Բունդեսթագում ընդունուած բանաձեւը», - յայտարարել է խօսնակը: Նա նաեւ լաւելել է, որ դեռ սպասում են թուրքիայի կառավարութեան արձագանքին Ինջիրլիքի ռազմակայան այցելելու՝ Գերմանիայի պատգամաւորների խնդրանքին եւ յոյս յայտնել, որ պատգամաւորները շուտով հնարաւորութիւն կ'ունենան այցելելու Ինջիրլիքում գտնուող գերմանացի զինծառայողներին:

Աւելի ուշ յայտարարուեց, որ Գերմանիան ասել է թուրքիային, որ գերմանացի պատգամաւորները պէտք է թոյլտուութիւն ստանան այցելելու Ինջիրլիք եւ ակնկալում են, որ Հոկտեմբերին նախատեսուած այցելութիւնը տեղի կ'ունենայ:

Յիշեցնենք, որ ամէն ինչ սկսուեց այն բանից յետոյ, երբ պաշտօնական Անկարան, վրդովուած Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունումից,

արգելել էր գերմանացի խորհրդարանականների մուտքը ռազմակայան: Որտեղ Գերմանիան հետախուզական օդանաւ ունի եւ վառելիքով վերալիցքաւորող մի տանկեր՝ դրանցով օժանդակելով «Իսլամական պետութեան» դէմ Միացեալ Նահանգների գլխաւորած կռաւիցիայի հարուածներին: Գերմանացի օրէնսդիրները սպառնացել են դադարեցնել առաքելութիւնը, եթէ թուրքիան թոյլ չտայ իրենց այցելել ռազմակայան:

«Դա կախուած է Գերմանիայի ձեռնարկած քայլերից: Եթէ նրանք անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, մենք թոյլ կը տանք այցելել: Սակայն, դժբախտաբար, պէտք է ասեմ, որ նրանց, ովքեր անարդարացիօրէն խառնուած են մեր պատմութեանը եւ մեքենայութիւններ անում դրա հետ, չի կարող թոյլատրուել այդ այցելութիւնը», - Reuters լրատուական գործակալութեան փոխանցմամբ, Անքարայում ասուլիսի ժամանակ յայտարարել է Չաւուշօղլուն, յաւելելով, թէ «անհրաժեշտ քայլեր»՝ նշանակում է Գերմանիայի կառավարութեան կողմից Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Բունդեսթագի բանաձեւից հրաժարուելու եւ յստակեցնելը, որ չի սատարում նրան:

Ինչին ի պատասխան Գերմանիայի ԱԳ նախարար Շտայնմայերը հակադարձեց, որ Բունդեսթագի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը ոչ մի կապ

չունի գերմանացի պատգամաւորների՝ թրքական Ինջիրլիքի ռազմաբազա այցելելու խնդրի հետ. «Ոչ մի ուղղակի կապ չեմ տեսնում երկու հարցերի միջեւ եւ այդ մասին յայտնել եմ նաեւ թուրք գործընկերներին»:

Այսպէս, Ինջիրլիք ռազմաբազայի շուրջ թուրք-գերմանական հակասութիւնների ֆոնին կոշտացաւ նաեւ Գերմանիայի դիրքորոշումը թուրքիայի ԵՄ անդամակցութեան հարցում:

Եւրոյան ձեռնարկով թուրքիան է կոնոմիկայի հարցերով գերմանացի յանձնակատար Գրինտեր էթինգերը «Բիլդ» հանդէսին տուած հարցազրոյցում քիչ հաւանական է համարել թուրքիայի մուտքը Եւրամիութիւն, քանի դեռ այնտեղ նախագահում է Թայիփ էրդողանը: «Ներկայիս պայմաններում թուրքիայի անդամագրումը ԵՄ-ին առաջիկայ տասնամեակի ընթացքում իրատեսական չէ», - նշել է էթինգերը:

Գերմանիայի փոխվարչապետ եւ էկոնոմիկայի նախարար Զիգմար Գաբրիէլը համոզմունք է յայտնել, որ թուրքիան դեռ 10-20 տարի չի համալրելու Եւրամիութեան երկրների շարքերը: «Չեմ կարծում, որ թուրքիան Եւրամիութեան անդամ կը դառնայ մինչեւ իմ կարիերայի աւարտը», - ասել է Գերմանիայի փոխվարչապետը:

Կարելի է ասել, որ Հայոց Յեղասպանութեան հարցում թուրքիայի դիրքորոշումը կրկին չեւազմակցութիւնը ԵՄ-ին, առանց այն էլ այդ ուղին բաւական փշոտ էր թուրքիայի համար:

Գերմանիան նաեւ սպացուցեց, որ թուրքիան չի կարող իր պահանջները ներկայացնել ու ակնկալել լուծումներ՝ յարմար Անկարայի սպասելիքներին:

«ՀԱՅԵԼԻ»

Բռնի Ուժի Վրայ Զինուած Տնտեսութիւնը

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

Այն, որ Հայաստանի տնտեսական վիճակն աղէտալի է, ակնյայտ է բոլորի համար: Այդ մասին ե՛ւ ընդդիմադիրներն են խօսում (տարբեր հարթակներին), ե՛ւ իշխանութիւնները (նեղ շրջապատում կամ «խորհրդապահական» գրոյցների ընթացքում):

Բայց խօսելով ոչ տնտեսութիւնը կը զարգանայ, ոչ պիւտճէն կը լցուի, ոչ էլ արտագաղթը կը կ'սանցուի, մինչդեռ իրավիճակն իսկապէս բարդ է, որովհետեւ արդէն յառաջիկայ ամիսներին պիւտճէնում կարող է փող չգտնուել անգամ նուազագոյն սոցիալական ծախսերի (թոշակներ, նպաստներ եւ այլն) համար:

Այնպէս չէ, որ իշխանութիւնները ձեռքերը ծալած նստել են ու ոչինչ չեն անում: Հակառակը՝ մի ուրիշ կատաղութեամբ են ոտուձեռ ընկել: Ինչ գնով էլ լինի՝ պէտք է լցնել պիւտճէն ու միաժամանակ ամէն ինչ անել, որ սոցիալական բողոքի ալիք չբարձրանայ, իսկ իշխանութիւններն այդ խնդիրը (եւ ընդհանրապէս՝ ցանկացած խնդիր) լուծելու միայն մի ձեւ գիտեն. կոպիտ ուժը:

Երկու բնորոշ օրինակ բերենք: Պաշտօնական վիճակագրութիւնն արձանագրեց, որ Յուլիսին նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ 4,3 տոկոսանոց տնտեսական անկում է գրանցուել: Գրեթէ անմիջապէս էլ պետեկամուտների կոմիտէն յայտարարեց, թէ պիւտճէնի մուտքերը դեռ մի բան էլ 2 միլիարդ դրամով աւելացել են: Ենթադրենք՝ երկու թուերն էլ ճիշտ են: Սա նշանակում է, որ ընդամէնը

երկու տարբերակ կայ. կամ ՊԵԿ-ն սկսել է աւելի դաժանաբար «քերել» փոքր ու միջին բիզնեսը, կամ էլ պայքարում է ստուերի դէմ: Բայց ստուերի դէմ պայքարի մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ եթէ բիզնեսի ինչ-որ հատուած դուրս բերուէր ստուերից՝ դա անպայման կ'անդրադառնար նաեւ տնտեսութեան ծաւալների վրայ, եւ 4,3 տոկոսանոց անկում հաստատ չէր արձանագրուի: Իսկ սա նշանակում է, որ ՊԵԿ-ը ընդամէնը կատարում է Սերժ Սարգսեանի «դեռ էլի տեղ կայ» հրահանգը ու պարզապէս տեւորի է ենթարկում բիզնեսը, դաշտը: Այսինքն՝ պիւտճէնի մուտքերն ապահովուած են համարեա՛ր բառիս բուն իմաստով ֆիզիքական ուժ կիրառելով (կամ ուժի կիրառման սպառնալիքով): Արդիւնքները կ'երեւան տարեվերջին, երբ պաշտօնապէս կը հրապարակուի, թէ քանի փոքր ու միջին ձեռնարկութիւն է փակուել, ու քանի հոգի է մշտապէս մեկնել Հայաստանից:

Հիմա՝ «ուժի կիրառման» երկրորդ դրուագը: Վայոց ձորի մարզի Աղաւնաձոր գիւղը ոտքի է կանգնել եւ պահանջում է, որ «Վեդի Ալկո» ընկերութիւնը վճարի դեռուս անցած տարի մթերած խաղողի գումարները: Իսկ ընկերութիւնը պարզապէս փող չունի: Յանկացած նորմալ երկրում բնական հարց կ'առաջանար՝ «բա որ փող չունէր, ինչո՞ւ էր խաղող մթերում»: Բայց Հայաստանում ամէն ինչ շատ աւելի բարդ է: Այդ ընկերութեան ղեկավարը պարզ ասում է, որ ինքը չէր ուզում խաղող մթերել, իշխանութիւնները զօռով են ստիպել: Այսինքն՝

անցած տարի գիւղացիները բողոքի ալիք են բարձրացրել, թէ «խաղող ենք աճեցրել՝ մթերող չկայ», իշխանութիւններն էլ գործարանների սեփականատէրերին կանչել են ու «վզներին թիւ դրել»՝ ուզէք-չուզէք, պիտի այսքան խաղող մթերէք, թէ չէ վատ կը լինի: Հիմա էլ նոյն այդ իշխանութիւնները նոյն այդ գործարանատէրերին զօռով ստիպում են վարկեր վերցնել ու փակել պարտքերը: Մի խօսքով՝ կոպիտ ուժով «բիզնես են զարգացնում»: Արդիւնքում՝ սնանկացած գործարարներ, իրենց չարչարանքից փոշմանած գիւղացիներ ու տնտեսական աճ՝ բնականաբար, թղթի վրայ: Դեռ լաւ է, որ իշխանութիւնները ՀՀ ազգաբնակչութեանը օրէնքի ուժով չեն ստիպում շաբաթական առուստին մէկ շիշ գինի գնել՝ օրէնքը խախտողների նկատմամբ վարչական տուգանք կիրառելու սպառնալիքով: Դա էլ կ'անէին, իհարկէ, եթէ սոցիալական պայթիւնից չվախենային:

Բայց զօռով տնտեսութիւն զարգացնել հնարաւոր չէ: Զօռով հնարաւոր է միայն խլել տնտեսավարողների ունեցուածքը կամ քողաքացիների վերջին կոպեկները: Ու քանի որ պիւտճէտային մուտքերի ապահովման տեսանկիւնից արդիւնքը նոյնն է՝ իշխանութիւնները հէնց այդպէս էլ անում են: Թէ ինչ կը լինի մէկերկու տարի յետոյ՝ նրանց չի հետաքրքրում: Կարեւորն այս պահին ինչքան հնարաւոր է քերելն է: Իսկ վերջին պահին երկրից «թռնել» միշտ էլ կը հասցնեն: Իշխանութեան հասնելու առաջին օրուանից հէնց դրան էլ նախապատրաստուել են: «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական Ընտրություններում Ընդդիմադիրները Չեն Միանար

Հոկտեմբեր 2-ին Գիւմրիի եւ Վանաձորի կաեսնալիք տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրութիւններուն առանձին ցուցակներով մասնակցող ընդդիմադիրները փորձած են բանակցիլ, դաշինքներ ստեղծելու նպատակով, սակայն բանակցութիւնները արդիւնքի չեն հասած:

«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցութեան փոխնախագահ՝ Լեւոն Զուրապեան՝ այս մասին իր կարծիքը յայտնելով, կ'ըսէ. «Մենք կրնանք հիմա ամէն տեսակի մտքեր յայտնել այդ կապակցութեամբ, բայց ես մեծ իմաստ չեմ տեսներ: Ուրիշ է խնդիրը, եթէ կարելի է միաւորուիլ»:

Թէեւ ընդդիմադիրները կը պնդեն, որ իրենց մրցակիցները իշխանութեան ներկայացուցիչներն են, բայց թեկնածուներու մեծամասնութիւնը՝ ընդդիմադիրներ են: Օրինակ՝ Գիւմրիի մէջ 7 ընդդիմադիր ուժ թեկնածու առաջադրած է, իսկ Վանաձորի մէջ՝ 6: Վանաձորի ընդդիմադիր դաշտի ազդեցիկ թեկնածուն «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչ Քրիստ Մարուքեանն է, որ կուսակցութեան ղեկավար, պատգամաւոր էտմոն Մարուքեանի եղբայրն է: Վերջինս յայտնեց, թէ՛ բանակցած են «Քաղաքացիական Պայմանագիր», «Հայ Ազգային Կոնգրես», «Ժառանգութիւն», «Համախմբում» կուսակցութիւններուն հետ, բայց չեն միաւորուած:

Ըստ քաղաքական ուժի խօսնակ Արմենուհի Վարդանեանի, Գիւմրիի մէջ, ընդդիմադիրները միաւորելու նպատակով բանակցութիւններ վարած է նորաստեղծ՝ «ԳԱԼԱ» կուսակցութիւնը:

«ԳԱԼԱ» կուսակցութիւնը՝ վստահ է, որ իրեն համար յաղթանակի առիթները մեծ են, այդ իսկ

պատճառով ընդդիմադիրներու չմիանալը դժբախտութիւն չի համարէր:

«Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը՝ կը պնդէ, որ սկիզբէն որոշած է առանձին ցուցակով հանդէս գալ, ըստ կուսակցութեան վարչութեան անդամ Ռոմանոս Պետրոսեանի՝ առանձին մասնակցելով իրենց սեփական խումբը կ'ուժեղացնեն: Ան յայտնեց. «Մենք պէտք է պնդենք, որ թիւ մէկ ընդդիմութիւնը մենք ենք եւ մեր կազմով պիտի երթանք ընտրութիւններուն: Դաշինքները, մեր քաղաքական նորագոյն պատմութեան մէջ, չեն հասած շոշափելի արդիւնքի»:

«Բարգաւաճ Հայաստան»-ը նոյնպէս ունի իր թեկնածուները: Կուսակցութեան առաջնորդ՝ Նաիրա Զոհրապեան, յայտնեց, որ իր կուսակցութիւնը որոշած է դաշինքով չ'երթալ ՏԻՄ ընտրութիւններուն, քանի որ, անոր խօսքով, ընդդիմադիր եռեակի տապալումէն յետոյ հետեւանքը յստակ է:

«Մենք որոշած էինք չի մասնակցիլ բանակցութիւններուն, որովհետեւ գիտէինք, որ՝ թէ՛ Վանաձորի, թէ՛ Գիւմրիի ընդդիմադիրները, որեւէ դաշինք չեն կրնար ձեւաւորել եւ այդպէս ալ եղաւ: Ինծի համար պարզ էր, որ ընդդիմադիր քաղաքական ուժերէն ամէն մէկը միւսին պիտի մեղադրէ բոլոր հնարաւոր եւ անհնար մեղքերու համար», - ըսաւ Զոհրապեան:

Ընդդիմադիր գրեթէ բոլոր ուժերն ալ կը պնդէին, որ դաշինք ստեղծելու փորձերը իրենց պատճառով չէ, որ ձախողած են:

Ընդդիմադիրները վստահ են, որ լաւ աշխատանքով յաջողութեան կը հասնին: Բոլորն ալ իրենց թեկնածուի յաղթանակի արիթները բարձր կը գնահատեն:

«Ժառանգութիւն»-ը Չի Մասնակցի Ընտրական Օրէնսգիրքի Շուրջ Նոր Բանակցութիւններուն

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութիւնը Ընտրական օրէնսգիրքի շուրջ որեւէ նոր բանակցութեան չի մասնակցիր: Այդ մասին «Ազատութեան» հետ ունեցած գրոյցի ընթացքին յայտարարեց կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան:

Խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ՝ իշխանութիւնը եւ ընդդիմութիւնը նոր բանակցութիւններ պիտի սկսին Ընտրական օրէնսգիրքի շուրջ: Մասնահետքերով ընտրութիւնները անցնելու՝ երկու կողմի ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը չիրականացաւ, քանի որ ժամկէտներու խնդիր կար: Այժմ ալ իշխանութիւնները պատրաստակամութիւն կը յայտնեն հրապարակել ընտրութիւններուն մասնակցած մարդոց ցուցակները:

Այդուհանդերձ, Զարուհի Փոստանջեան «կարիքը չի տեսներ բանակցային կողմ դառնալու»: «Եթէ նրանք ցանկութիւն ունեն հրապարակելու ցուցակները, ապա թող հրապարակեն, բայց ես չեմ կարծում, որ նոյնիսկ այդ հրապարակման միջոցով մենք ունենալու ենք արդիւնաւէտ վերահսկման մեխանիզմ», - «Ազատութեան» հետ

ունեցած գրոյցի ընթացքին յայտնեց ընդդիմադիր պատգամաւորը:

«Մասնաւորապէս, «Ժառանգութեան» ո՞ր դրոյթը, ո՞ր պահանջը պէտք է տեղ գտնի: Ի վերջոյ, ցուցակների հրապարակումն էլ տասը տարուց աւելի «Ժառանգութիւն»-ը պահանջում էր», - այս պատգամին Փոստանջեանն պատասխանեց՝ «Դուք գիտէք, որ ընդդիմութիւնը՝ ոչ միայն «Ժառանգութիւն»-ը, բոլոր առաջարկները ձեւակերպել էր եւ ներկայացրել էր: Մի քանիսն էին, մէկը չէր, փաստօրէն, այդ մի քանիսից հիմնականներից մէկը մի քանի օր առաջ նրանք մերժեցին»:

«Մենք ասում ենք, որ պէտք է լինի մէկ ընտրատարածք ամբողջ հանրապետութիւնում, մինչդեռ այս պահի դրութեամբ իրենք գնացել են նորից այն տարբերակին, որ պէտք է լինեն մի քանի ընտրատարածքներ, նրանց թիւը 13-ն է, եւ պէտք է լինեն տարբեր ընտրատարածքային ցուցակներ: Եւ նաեւ այդ կայուն մեծամասնութիւն հասկացութիւնն է ամրագրուած, որը ընդհանրապէս կապ չունի ո՛չ ընտրութիւնների, ո՛չ ընտրութիւնների միջոցով ձեւաւորուող օրէնսգիրքի իշխանութեան հետ», - նշեց «Ժառանգութեան» պատգամաւորը:

Նիկոլ Փաշինեան. «Մենք Կը Պաշտպանենք Քաղաքացիներին Թաղային Զեղինակութիւններից»

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը առաջիկայ ՏԻՄ ընտրութիւններում իր թեկնածուներին առաջադրել է միայն Գիւմրիում եւ Վանաձորում, ինչը իրեն միակ ընդդիմութիւն յայտարարած կուսակցութեան վարչութեան անդամ, ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը «Առաջին լրատուական»-ի հետ զրոյցում պայմանաւորեց այն հանգամանքով, որ իրենք ընդամէնը մէկ տարուայ կուսակցութիւն են:

Նիկոլ Փաշինեանը այս առնչութեամբ կարեւորեց ճիշդ յայտարարութիւնները ճիշդ դարակներում դնելը՝ ասելով, որ մէկ ընդդիմութիւնը կախարդական փայտիկի մի հարուած չէ, դա քաղաքական պրոցէս է, որը նախ սկսում է գաղափարից եւ առաջարկում է հանրութեանը:

Իսկ ինչ վերաբերում է նրա կողմից նախկինում հնչեցուած այն յայտարարութիւններին, թէ իրենք մարդկանց չեն առաջնորդելու պարտութեան՝ Փաշինեանն ասաց, որ իր յայտարարութիւնը վերաբերել է իշխանափոխութեանը, որի ժամանակ՝ այո, «մենք մինչեւ չունենանք այդ նախապայմանները՝ չենք յայտարարելու իշխանափոխութեան յետհանձնարիլի այդ պրոցէսը: Իշխանութեան տէրը ժողովուրդն է, ուստի իշխանափոխութեան համար շատ կարեւոր է հանրային ժողովրդի կամարտայայտութիւնը»:

«Իմ հնչեցրած այդ ձեւակերպումը ընդհանրապէս որեւէ կապ չունի ընտրական պրոցէսի հետ: Ընտրութիւնների ժամանակ որոշում է ընտրողը, իսկ քաղաքական ուժերից միայն Հանրապետականն է որոշում ընտրողի փոխարէն: Եւ եթէ ՔՊ-ն չյաղթի ընտրութիւններում, դա չի նշանակում, որ մենք ընտրողին առաջնորդում ենք դէպի պարտութիւն, այլ



Աժ պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

այդ դէպքում ընտրողն ինքն է իրեն առաջնորդել դէպի պարտութիւն», - ասաց Նիկոլ Փաշինեանը:

Հարցին՝ իսկ ի՞նչ էք անելու, որ այդ նոյն ընտրողը ընտրատեղամասից դուրս պաշտպանուած լինի թաղային, քրէական հեղինակութիւնների կողմից գործադրուող ճնշումներից, քաղաքական գործիչն ասաց. «Որպէս քաղաքական ուժ՝ ցանկացած մարդ, ով մեզից պաշտպանութիւն կ'ակնկալի թաղային հեղինակութիւններից, ոչ թաղային հեղինակութիւններից, պազածներից, նստածներից, կանգնածներից՝ մենք կ'ապահովենք այդ մարդկանց իրաւունքները, կանգնածներից մենք կ'ապահովենք այդ մարդկանց իրաւունքները, կանգնածներից մենք կ'ապահովենք այդ մարդկանց իրաւունքները, կանգնածներից մենք կ'ապահովենք այդ մարդկանց իրաւունքները»:

Իսկ քաղաքական փոփոխութիւնը սկսում է քաղաքացու քաղաքական ընտրութիւնից. 5000 դրամով Սերժ Սարգսեանին քուէարկածը լեզբիտիմացրել է արդէն այս իշխանութեանը: Դուք, քաղաքացիներ, ցոյց տուէք, որ մեզ լիազօրում էք իրականացնել իշխանափոխութիւն, եւ մենք ձեզ կը տանք իշխանափոխութիւն»:

Սարի Թաղում Տեղի Ունեցած Բռնութիւնների Գործով Բարձրաստիճան Ոստիկաններ Չեն Զարցաքնուում

«Քանի դեռ Սարի թաղում լրագրողների ու քաղաքացիների դէմ բռնութիւնների գործով չեն հարցաքննուում բարձրաստիճան ոստիկաններ, իսկ մեղադրանքներ էլ առաջադրուում են միայն քաղաքացիական անձանց, անկողմնակալ քննութեան մասին խօսել չի կարելի», «Ազատութեան» հետ զրոյցում կարծիք յայտնեց իրաւապաշտպան Արթուր Սաքունցը:

«Յատուկ Քննչական Մասնաշրջան կողմից տարածած հաղորդագրութեան մէջ խօսքը գնում է միայն քաղաքացիական անձանց նկատմամբ քրէական գործի յարուցման, խափանման միջոց կալանքի կիրառման մասին: Իսկ դա համաչափ չէ: Բաւարար հիմքեր կային, որպէսզի լրագրողների եւ քաղաքացիների նկատմամբ բռնութիւնների կատարման գործով նաեւ քրէական հետապնդում իրականացուէր առաջին հերթին Աշոտ Կարապետեանի՝ Երեւանի նախկին ոստիկանապետի եւ ներքին գործերի հրամանատար Լիովա Երանոսեանի նկատմամբ, որովհետեւ անմիջականօրէն նրանք են հրամանը տուել», - նշեց Արթուր Սաքունցը: Յատուկ Քննչական Մասնաշրջան փոխանցմամբ՝ Յուլիսի 29-ի լոյս 30-ի գիշերը Երեւանի

Սարի թաղում «Սասնայ ծուր» գինուած խմբի աջակիցների երթի ընթացքում ենթադրաբար տուժել են 99 քաղաքացիներ, որոնցից 23-ը՝ լրագրողներ: 36 անձ ենթարկուել էր ֆիզիկական բռնութեան, աւելի մեծ թիւով՝ 47 քաղաքացի էլ ոստիկանութեան կիրառած յատուկ միջոցների հետեւանքով ստացել էին բեկորային վնասուածքներ:

Մինչ օրս որեւէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրուել, ՀՔԾ-ն նշում է միայն, որ առերեւոյթ չանցագործութիւններ կատարելու, այդ թւում՝ լրագրողների մասնագիտական օրինական գործունէութեանը խոչընդոտելու համար նախաքննութեան այս փուլում քրէական հետապնդում է իրականացուում 6 քաղաքացիական անձանց նկատմամբ:

Սարի թաղում ծեծի ենթարկուած լրագրողներից Մարութ Վանեանը պատմում է, որ իր դէմ բռնութիւն կիրառած անձինք եկել են ոստիկանների թիկունքից: «Ազատութեան» տեսախցիկն էլ ֆիքսել էր, թէ ինչպէս են մի քանի տասնեակ անձինք խորհրդային փողոցից իրաւապահներին թոյլտուութեամբ անցնում ոստիկանական պատնէշն ու շարժուում Սարի թաղի ուղղութեամբ:

ԼՈՒՐԵՐ

Ուլիքիլիքսի Բացայայտումները Միջազգային Դիտորդները Ծնշումներու Ենթարկելու Մասին

2008-ի Մարտ 1-էն յաջորդող իրադարձութիւններուն առթիւ Հայաստանի իշխանութիւններու գործողութիւններու թիւերու մասին ամերիկացի դիւանագէտներու տուած գաղտնի գնահատականները բացայայտուած են վերջերս «Ուլիքիլիքս»-ի կողմէ հրատարակուած փաստաթուղթերուն շնորհիւ: Այս մասին «Ժամանակ» թերթը կը գրէ: -

Այն ժամանակ Հայաստանի մէջ, ԱՄՆ-ի գործերու ժամանակաւոր հաւատարմատար ժողով ֆենիլպտոնի կողմէ հեղինակուած գեղեցագրով, կը պարզուի, որ ԵԱՀԿ-ի դիտորդները աննախադէպ ճնշումներու ենթարկուած են իշխանութիւններուն կողմէ: Ամերիկեան դիւանագէտներն ալ յատկօրէն արձանագրած են, որ ՀՀ իշխանութիւններու, մասնաւորապէս՝ Սերժ Սարգսեանի խօսքն ու գործը իրար չեն համապատասխանած:

Բրիտանական դեսպանատունը տեղեկացուցած է ամերիկացիներուն, որ դիտորդական առաքելութեան փոխնախագահ, բրիտանացի Փոլ Օ'Գրեյդին այնքան սարսափած է, որ խնդրած է բրիտանական դեսպանութենէն, իրեն ժամանակէն շուտ հեռացնեն Հայաստանէն: Օ'Գրեյդին մեքենայով շտա-

պօրէն հասցուցած են վրաստանի բրիտանական դեսպանատուն: Օ'Գրեյդին բացայայտած է, որ ինք տասնամեակներ զբաղած է ընտրութիւններու դիտորդութեամբ, նոյնիսկ Անկոլայի ու նմանօրինակ այլ երկիրներու մէջ, սակայն բնաւ այդքան սաստիկ ճնշումներ չէ զգացած, ինչպէս Հայաստանի մէջ: Փենիլպտոնը կը տեղեկացնէ նաեւ, որ ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելութեան ուրիշ ներկայացուցիչ մը յայտնած է, որ ՀՀ իշխանութիւններէն մէկը մտերմաբար խորհուրդ տուած է միջանկեալ գեղեցը կազմել աւելի դրական լոյսի տակ:

Ամերիկացի դիւանագէտը, ԵԱՀԿ-ի դիտորդներու դէմ ճնշումներէն մէկն ալ կը համարէ անոնց, քրէական գործերու մէջ՝ որպէս վկայ ներգրաւուելու որոշումները: Յատկանշական է, որ ֆենիլպտոնը կը վկայուիչէ այն դիտորդներուն, որոնց վրայ իշխանութիւնները անուղղակի ճնշումներ բանեցուցած են:

2008-ի Փետրուար 19-էն յետոյ Հայաստանի մէջ գտնուող դիտորդներէն մէկը՝ այնքան վախցած է, որ կարելի է ըսել՝ ճողոպրած է Հայաստանէն՝ դառնալով «արդար ու ազնիւ» ընտրութիւններու զոհը:

«Ռուսաստանը Չունի Հայաստանի Բաղաբացիներու Սեւ Ցուցակ»

«Ռուսաստանը չունի Հայաստանի քաղաքացիներու սեւ ցուցակ, որ կ'արգիլէ անոնց մուտքը Ռուսաստանի Դաշնութիւն: Ռուսաստանը որպէս ինքնիշխան երկիր, իրաւունք ունի մէկուն թոյլատրելու, իսկ միւսին արգիլելու մտնել իր տարածքը», ըսաւ Հայաստանի մէջ, Ռուսաստանի դեսպանի խորհրդական՝ Օլեգ Շապովալովը, անդրադառնալով շաբաթ մը առաջ Մոսկուայի «Շերմետեւ» օդակայանին մէջ, տեղի ունեցած միջադէպին, երբ «Համաշխարհայնացման եւ տարածաշրջանային կեդրոնի» ղեկավար Ստեփան Գրիգորեանը արտաքսուած էր երկրէն:

Օգոստոս 30-ին, ռուս սահմանապահները Գրիգորեանին չէին թոյլատրած դուրս գալ օդակայանի տարածքէն: Քաղաքագէտին վերադարձուցած էին՝ տեղեկացնելով, որ վերջինիս մուտքը Ռուսաստան արգիլուած է մինչև 2030 թուական: Ստեփան Գրիգորեան յայտնած է, որ իրեն արտաքսէր են քաղաքական դրդապատճառներով եւ մտավախութիւն ունէր, որ միւնակ չէ այդ ցուցակին մէջ:

«Սեւ ցուցակներու» բացակայութեան մասին քաղաքական վերլուծաբանը կ'ըսէ. - «Գլխաւոր դատաւորը ժամանակն է, ժամանակը ցոյց կու տայ, թէ այս ձեւի երեւոյթները մենք կը տեսնենք մեր հասարակական կամ քաղաքա-

կան գործիչներու նկատմամբ: Կ'ուզեմ մեր մարդու իրաւունքներու պաշտպաններուն աջակցութիւնը խնդրել»:

«Իսկականին, դէպքը այնպէս պատահած է, որ պարոն Գրիգորեանին արգիլած են մտնել Ռուսաստանի տարածք: Սկզբունքօրէն, մենք պարտաւոր չենք մեկնաբանել եւ բացատրել, ուստի, Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան դիմումին համաձայն՝ մենք մեկնաբանութիւն խնդրէր ենք մեր համապատասխան կառույցէն եւ կը զբաղինք այդ հարցով», - յայտնեց Հայաստանի մէջ, Ռուսաստանի Դաշնութեան դեսպանի խորհրդականը:

Շապովալովի դիտարկման արձագանքելով, իրաւապաշտպան Արթիւր Սաքունցը հակադարձեց, թէ՛ երկու երկիրներուն միջեւ վիզայի կարգի խնդիր չկայ եւ առնուազն տարօրինակ է, որ Ռուսաստանը այսպիսի վերաբերմունք կը ցուցաբերէ իր ռազմավարական դաշնակիցի քաղաքացիին նկատմամբ:

«Ինքը սկիզբէն արդէն կը հակասէ միջպետական պայմանագրին, որովհետեւ ինքնիշխան պետութիւնները պայմանաւորուած էին, որ իրենց քաղաքացիները պէտք է ազատ ելու մուտ կատարեն: Այնտեղ չէ գրուած, որ այդ ելումուտը կրնայ արգիլուիլ որեւէ հանգամանքով», - ընդգծեց Սաքունցը:

Ամերիկայի Դասպանը Յայտարարած է

Շարունակուած էջ 1-էն

քին հաւաքներու մշտադիտարկման արդիւնքները, ստացած անհազանգերու եւ բողոքներու ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը:

Իշխանեան իր մօտահոգութիւնը յայտնած է հաւաքի մասնակիցներու եւ լրագրողներու

նկատմամբ իրականացուած բռնութիւններուն, Հիմնադիր խորհրդարանի անդամներու, քաղաքացիական քթիւնիսթներու եւ անոնց համակիրներու նկատմամբ իրականացուող հետապնդումներուն եւ անոնց իրաւունքներու անհարկի սահմանափակումներու դէպքերու մասին:

Դաւիթ Պապայեան՝ «Ծանաչումը Կարելոր է, Բայց Մենք Արդէն Իսկ ՏըՖաքթօ Անկախ Ենք»

Լեռնային Ղարաբաղի անկախութեան 25 տարուան ամենամեծ ձեռքբերումը այն է, որ «Արցախի Հանրապետութիւնը՝ որպէս անկախ, ինքնուրոյն, ինքնիշխան ժողովրդավարական պետութիւն կայացած է», - «Ազատութեան» հետ զրոյցին յայտարարեց Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Պապայեանը:

«Երբ 25 տարի առաջ հռչակուեցաւ Արցախի Հանրապետութիւնը, հռչակուեցաւ շատ ծանր պայմաններու մէջ՝ Ատրպէյճանի շրջափակման, տազնապի, կոտորածներու, այնուհետեւ լայնածաւալ պատերազմ սկսաւ Ատրպէյճանը՝ Արցախի դէմ: Բայց ազգային ազատագրական պայքարը տրամաբանական զարգացում արձանագրեց, ստեղծուեցաւ Արցախի Հանրապետութիւնը: Այնուհետեւ սկսաւ ապաքինուիլ այդ հասցուած վնասէն, տնտեսութիւնը արդէն տեղափոխուեցաւ խաղաղ հունի վրայ, եւ նորմալ ձեւով կը զարգանայ», - ըսաւ Պապայեանը:

Ղարաբաղի անկախութեան ճանաչման մասին հարցումին պատասխանելով բարձրաստիճան պաշտօնեան ըսաւ. -

«Այդ անկախութեան Տը ֆաքթօ մենք հասած ենք մեր տղաներու արեան գնով, իսկ այդ մէկը գին չունի: Ինչպէս կը վերաբերին տարբեր պետութիւններ մեր հանրապետութեան ճանաչման, ապա այդ մէկը միայն ժամանակի



Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Պապայեան

խնդիր է: Այստեղ մենք գիտենք, որ շատ աշխարհաքաղաքական խնդիրներ կան, որոնք բախումի կ'ենթարկուին տարբեր շահերու հետ: Բայց տեսէք՝ ինչ անդրադարձ ունեցած է ճանաչումը նահանգային, տեղականին ինքնակառավարման առումով, օրինակ՝ Լոս Անճելըս քաղաքը, որ աշխարհի ամենամեծ քաղաքներէն մէկն է, ճանչցած է Արցախի Հանրապետութիւնը: Այսինքն, աստիճանաբար յառաջ կ'երթայ: Այո, մեզ ճանչցած են նաեւ երեք կիսաճանաչուած երկրներ՝ Աբխազիան, Հարաւային Օսիան, Մերձդնեստրը, բայց ընդհանուր առմամբ, կը կարծեմ, ժամանակը կու գայ՝ կը ճանչնան նաեւ այլ երկիրներ»:

33 Ամիսէ Ի Վեր Բանտարկուած Սեւան Նշանեան Պիտի Պարգեւատրուի

Իր քաղաքական հայեացքներուն համար բանտարկուած հայազգի մտաւորական Սեւան Նշանեան պիտի պարգեւատրուի: Այս մասին «Արեւելք» կայքէջը տեղեկութիւն ստացած է Նշանեանի մօտիկ անձնաւորութեան մը կողմէ մը:

Նոյն աղբիւրը նաեւ փոխանցած, որ Սեւան Նշանեան, իր կատարած բանասիրական-գաղափարական աշխատասիրութիւններուն եւ ծաւալած գործունէութեան առ ի գնահատանք պիտի ստանայ ՀՀ սփիւռքի նախարարութեան «Ուլիքեամ Սարոյեանի» անուան մետալը:

Պարգեւատրումը պիտի կայացուի յառաջիկայ օրերուն Պոլսոյ մէջ կայացուելիք պաշտօնական հաւաքի մը ընթացքին: Յիշեցնենք, որ Սեւան Նշանե-



Սեւան Նշանեան

եան 33 ամիսն ըլլալով կը շարունակէ մնալ Թուրքիոյ բանտերուն մէջ, իսկ անոր բանտարկութեան անտեղի վճիռը պատճառաբանուած էր «ապօրինի շինարարութիւններ» ընելուն յանցանքով:

Հինգ Հարիւր Հազար Տոլար Արցախին

Շարունակուած էջ 1-էն

եանին, Արցախի 25-ամեակի տոնախմբման այս օրերուն ԳՀԽ ժողովը Լեռնային Ղարաբաղի մէջ անցընելու հրահրին համար: Նորին Սրբութիւնը կարելոր նկատած է ԳՀԽ ժողովներու պարբերական գումարումը հայոց տարբեր թեմերու մէջ, ինչ որ խանդավառութիւն եւ հոգեւոր կեանքի զօրացման մեծ խթան կը հանդիսանայ համայնքներու համար:

«Արցախ աշխարհ այս այցը ուխտագնացութիւն է մեզի համար, մէկ հող, ուր ամփոփուած են մեր նախնեաց յիշատակները, ուր կը գտնուին բազում սրբավայրեր: Եկած ենք մեր խոնարհումը բերելու, ծնրադրելու նուիրական այդ սրբավայրերուն մէջ եւ մեր աղօթքն

առ Աստուած բարձրացնելու Արցախի ապահովութեան եւ արցախահայութեան բարօր կեանքի համար», - ըսած է Գարեգին Բ. Հայրապետը՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին իր աշխարհասփիւռ թեմերով ու համայնքներով միշտ եղած է եւ կը մնայ արցախահայութեան կողքին, աջակից եւ զօրակից Արցախին՝ իր արդար իրաւունքներու պաշտպանութեան գործին մէջ:

Այս կապակցութեամբ Նորին Սրբութիւնը տեղեկացուց, որ այցի առիթով Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան թեմերու անունով Մայր Աթոռը վերստին հինգ հարիւր հազար ԱՄՆ տոլար կը փոխանցէ Արցախին՝ արցախահայութեան կարիքներուն համար:

ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ 4 ՅԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ԾԱՆՐ ՎՆԱՍՆԵՐ ԿՐԱԾ ԵՆ. ՎԱԶԳԵՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ



«Այս տարի եղած բնական աղէտը առաջինն էր նահանգի (Լուրդիանա) պատմութեան մէջ», «Արեւելք»-ին յայտնեց Վազգէն Գալթաքճեան: Ան նշեց, որ «քաղաքին մէջ կան 8 գետեր, որոնք Միսիսիփի գետին մէջ չեն թափիր եւ անոնք 3.5 օր տեղատարափ անձրեւներու հետեւանքով միասին յորդեցան եւ ջուրը խուժեց քաղաք»: Ըստ մեր խօսակիցին, Միացեալ Նահանգներու Լուրդիանա նահանգի մայրաքաղաք՝ Պաթոն Ռուժի շրջակայքը գտնուող գիւղաքաղաքները վնասուած են, ի մասնաւորի 2 գիւղաքաղաքներ, որոնց 90 առ 100-ը մնացած է ջուրի տակ: Գալթաքճեան նաեւ նշեց, որ կառավարութեան տուեալներէն համաձայն՝ 45,000 տուներ եւ 20-25,000 գործատեղեր ընկղմած են ջուրերուն մէջ:



Վազգէն Գալթաքճեան

անհատ: Տեղի Սբ. Կարապետ եկեղեցւոյ ջանքերով նիւթական եւ բարոյական օժանդակութիւններ տրամադրուած են տուժած ընտանիքներուն:

Գալթաքճեան նաեւ յիշեցուց, որ Ազգային Առաջնորդարանի միջոցաւ դրամահաւաք պիտի յայտարարուի Արեւելեան թեմի եկեղեցիներուն մէջ, որպէսզի աղէտեալ այս ընտանիքները նախնական օժանդակութիւններ ստանան, մինչեւ կառավարութեան կողմէ կատարուելիք փոխհատուցումները:

«Կառավարութիւնը նոր ձեւերու մասին կը մտածէ խուսափելու՝ նման պատահարներէ: Ճիշտ է, որ ահաւոր վնասներ կրեցին մեր ընտանիքները, բայց բարեբախտաբար մարդկային կորուստներ չունեցանք: Հայ ժողովուրդի գաւակները միշտ գիրար կ'օգնեն ճգնաժամային պահերուն: Բոլորը միասին ձեռք ձեռքի տուած տուներուն մէջ լեցուած աղբերը մաքրած են արդէն եւ կը սպասեն պատերու չորացման, որպէսզի ընտանիքները տեղափոխուին իրենց տուները», եզրափակեց Վազգէն Գալթաքճեան:

Յիշեցնենք, որ անցեալ 13 օգոստոսին Պաթոն Ռուժը հարուածած աղէտը պատճառ դարձած էր նիւթական մեծ վնասներու եւ ըստ կայանին քաղաքին մէջ եղած վնասները կը գնահատուին 47 միլիոն ամերիկեան տոլարով:


ՈՐՈՇՈՒԵԼ Է ՅԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ «ԵՐԿՐԱՇԱՐԺ» ՖԻԼՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ «ՕՍԿԱՐԻ»

Հայկական ազգային կինոակադեմիայի նիստում կինոակադեմիայի անդամների փակ քուէարկութեան արդիւնքում որոշուել է, որ «Օսկար» մրցանակաբաշխութեան «Լաւագոյն օտարալեզու ֆիլմ» անուանակարգում Հայաստանից ներկայացուելու է Սարիկ Անդրէասեանի «Երկրաշարժ» ֆիլմը: «Օսկարի» համար Հայկական ազգային կինոակադեմիան ստացել

էր երեք ֆիլմի յայտ՝ Դաւիթ Սաֆարեանի «Տաք երկիր, ցուրտ ձմեռ», Սարիկ Անդրէասեանի «Երկրաշարժ», Զիւլա Աւետիսեանի «Վերջին բնակիչը», երկու փուլով տեղի ունեցած քուէարկութեամբ ընտրուել է «Երկրաշարժ»-ը, սակայն առաջին փուլում աւելի շատ ձայներ է հաւաքել «Վերջին բնակիչը»:

Սպիտակի երկրաշարժի մասին պատմող Սարիկ Անդրէասեանի «Երկրաշարժ» ֆիլմի պրէզիւսենթըն է «Մարս մեղրա» կինոընկերութեան նախագահ Ռուբէն Դիշդիշեանը: Ֆիլմի սցենարի հեղինակներն են Սերգէյ Յուրակովը, Ալեքսէյ Գրաւիցկին, Արսէն Դանի-

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՍՈՒՐ ՇՐՋԱՆԻ ՅԱՅԿԱԿԱՆ ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒԻ



Թուրքիոյ Տիարպէքիր քաղաքի Սուր շրջանին մէջ գտնուող հայկական Ս. Սարգիս կաթողիկէ եկեղեցին պիտի վերակառուցուի: Այս մասին կը յայտնէ պոլսահայ «Ակօս» թերթի կայքը:

Անցեալ տարի Սուրի մէջ տեղի ունեցած երկարատեւ զինուած բախումներու ընթացքին՝ հայկական կաթողիկէ եկեղեցին լրջօրէն վնասուած էր, հասարակական կայքերու մէջ տարածուած լուսանկարներով կ'երեւէր, որ կառուցը գրեթէ կիսաքանդ վիճակի մէջ է:

Թուրքիոյ շրջակայ միջավայրի պահպանութեան եւ քաղաքաշինութեան նախարարութիւնը Սուրի մէջ գտնուող եւ բախումներէն տուժած 11 պատմական կառուցի համար մշակած է վերականգնման աշխատանքներու ծրագիրը:

Նախագիծին ծիրէն ներս՝ կը ծրագրուի նաեւ հայկական կաթողիկէ եկեղեցւոյ վերակառուցումը, որուն աւարտը նախատեսուած է 2018-ին: Եկեղեցւոյ վերականգնման աշխատանքները պիտի ղեկավարէ Թուրքիոյ հիմնադրամներու գլխաւոր վարչութիւնը, որուն ներկայիս կը պատկանի կաթողիկէ եկեղեցւոյ անկախանութեան իրաւունքը:

Եկեղեցւոյ տարածքին արդէն սկսած են նախապատրաստական աշխատանքները, տարածքը կը մաքրուի եւ կը բարեկարգուի:

2013-ին եւս Սուրի հայկական եկեղեցին վերանորոգուած էր, որմէ ետք կ'օգտագործուէր իբրեւ գորգերու արհեստանոց: Խօսակցութիւններ կան, որ այս անգամ վերակառուցումէն ետք կառուցը կրկին կընայ վերածուիլ եկեղեցւոյ:



նի «Երկրաշարժ» ֆիլմի պրէզիւսենթըն է «Մարս մեղրա» կինոընկերութեան նախագահ Ռուբէն Դիշդիշեանը: Ֆիլմի սցենարի հեղինակներն են Սերգէյ Յուրակովը, Ալեքսէյ Գրաւիցկին, Արսէն Դանի-

էլեանը: Ֆիլմը պատմում է 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի մասին, գործողութիւնները տեղի են ունենում նախկին Լենինականում (Գիւմրի):

Ազատ եւ Անկախ Արցախը 25 Տարեկան է



Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այսօր կը նշէ, իր անկախութեան 25-րդ տարեդարձը: Արեւան, հերոսական սխրանքներու եւ մեծ զոհաբերումներու գնով իր անկախութիւնը կերտած այս հողատարածքը, ոչ միայն իր ժողովուրդին, այլ համայն հայութեան հպարտութեան արգասիքն է: Գաղտնիք ալ չէ, որ արցախեան գոյամարտի առաջին օրերէն սփիւռքի հայութիւնն ալ, իր տարբեր շերտերով, երանգներով եւ գաղափարական տեսակներով ապրեցաւ ու մաքառեցաւ Արցախով եւ յանուն Արցախի:

Եւ իրաւամբ, հզօր խորհուրդ էր երէկ ու հզօր խորհուրդ կը մնայ այսօր ալ, որ Արցախի մէջ եղող իւրաքանչիւր անկիւնադարձ սրտի տրոփ դառնալով կը հասնի հայութեան ամէնէն հեռաւոր կէտերուն մէջ եղող հայութեան:

Պիտի ըսէք պատմութեան դաս, կամ յաղթանակ կերտած այլու հպարտութեան վերջին լաստ: Պիտի ըսէք, ցաւէն ու տառապանքէն, վիշտէն ու գաղթականութիւնէն վերապրած հայութեան վերջին յոյսն էր Արցախը, որուն յաղթանակին ամրագրումը դարձաւ պարտք մեր բոլորի ուսերուն: Այո՛, կան այս բոլորը, սակայն ասոնցմէ վեր եւ անդին, Արցախի հերոսական պատմութեան դրուագներուն մէջ ամրագրուած են, մեր ցեղային խորհուրդի իրական լաստերը:

Արցախը, ինչպէս երէկ այսօր ալ փրկութեան լաստ եղաւ մեզի համար:

Մեր ինքնութեան տագնապներուն, ձուլումի թանձր խաւարին մէջ դուրս ցայտող, իբրեւ յոյսի առագաստ, որուն ապաւինելով մենք նոր խարիսխներ պիտի նետենք:

Արցախը մաքրեց մեր եսը, Արցախը կերպարանք ստացաւ յաղթանակ տարած մարդու հպարտութեամբ ու ատոր համար է, որ ցանկացած դէպքի եւ ցանկացած կրակոցի դիմաց, մենք բոլորս իբրեւ մէկ հայութիւն կը բոլորուինք հասնելու համար անոր բոլոր կարիքներուն:

Այսօր, երբ տարբեր ամպիոններէ եւ տարբեր մակարդակներու վրայ խօսակցութիւններ կը լսուին, որ Արցախի հիմնախնդրին առընթեր զիջումներու նոր փուլ մը պիտի ընթացք առնէ, Արցախի պատասխանը մէկ է ու միահամուռ, որ կ'ըսէ՝ «Այն, ինչը որ արիւնով առած ես սակարկութեան առարկայ չի կրնար դառնալ»:

Այս ոսկեզօծ ճշմարտութեան իրական տէրերը Արցախի հերոս տղաներն են, որոնք իրենց ունեցած ամենաթանկ արժէքով կեանքով պատրաստ են ամրօրէն կառչած մնալ այդ հողին եւ մինչեւ վերջին շունչ պահպանել հերոսական Արցախի սահմանները:

Աւարտին, տեղին է նշել, որ 25-ամեայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան զարգացումն ու հզօրացումը, ինչպէս երէկ այսօր ալ պիտի մնայ մեր բոլորին համար անյետաձգելի եւ առաջնային գերխնդիր:

«Արարատ» Պէյրութ

Ռուսաստանէն Արտաքսած Են Ստեփան Գրիգորեանը՝ «Քաղաքական Դրդապատճառներով»



Ռուսաստանի իշխանութիւնները երկրէն արտաքսած են ՀՀ քաղաքացի, «Կլոպալիզացիա եւ տարածաշրջանային համագործակցութեան» վերլուծական կեդրոնի ղեկավար Ստեփան Գրիգորեանը, թոյլ չտալով անոր դուրս գալ Մոսկուայի «Շերեմէթեօ» օդակայանի տարածքէն:

Իր արտաքսման մասին Գրիգորեան երէկ նամակով տեղեկացուցած է Գիւմրիի «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանին: Նամակին մէջ Գրիգորեան նշած է, որ Օգոստոս 30-ին, առաւօտեան ժամը 8-ին, ժամանած է «Շերեմէթեօ» օդակայան, ուրկէ պէտք է մեկնէր ՌԴ մայրաքաղաք՝ աչցելու հօր՝ Մոսկուա գտնուող շիրիմը: Սակայն, օդակայանին մէջ ռուս սահմանապահները կանգնեցուցած են զինք՝ տեղեկացնելով, որ Գրիգորեանին մոտքը Ռուսաստան արգելուած է՝ մինչեւ 2030 թուականը:

Վերլուծաբանին ներկայացուած է Ռուսաստանի Դաշնութեան «Ելքի եւ մոտքի կարգի վերաբերեալ» օրէնքը, զոր կ'անդրադառնայ օտարերկրացիներու՝ քրէական եւ այլ կարգի խախտումներ պարունակող գործողութիւնները: «Այդ ամէնն ինձ հետ որեւէ առնչութիւն չունի, քանի որ վերջին 20 տարուան ընթացքին չեմ ծաւալել», - Բարսեղեանին ուղղուած իր նամակին մէջ գրած է Ստեփան Գրիգորեան, ընդգծելով՝ իր պարագային էական է օրէնքի միայն այն կէտը, որ կը վերաբերի այն օտարերկրացիներու արտաքսման, որոնք կը համագործակցին Ռուսաստանի մէջ անցանկալի նկատուող միջազգային կազմակերպութիւններու հետ: «Ոչ մէկի համար գաղտնիք

չէ, որ իմ ղեկավարած՝ «Կլոպալիզացիա» եւ տարածաշրջանային համագործակցութեան» կեդրոնն ակտիւօրէն համագործակցում է եւրոպական հասարակական կազմակերպութիւնների, կեդրոնների, ժողովրդավարական ֆոնտերի հետ: Ակնյայտ է, որ Ռուսաստանի իշխանութիւնների որոշումը քաղաքական դրդապատճառներ ունէր: Յայտնի է, որ Ռուսաստանը ցանկանում է Հայաստանում նոյնպէս ձեռք բերել քաղաքացիական հասարակութեան անկախ ինստիտուտների գործունէութիւնը», - Ստեփան Գրիգորեան նշած է նամակին մէջ՝ շեշտելով, որ «Շերեմէթեօ» օդակայանէն ներս գտնուելու ընթացքին ձեռքէն առած են անձնագիրը ու զրկած են ազատ տեղաշարժուելու հնարաւորութենէն:

Ստեփան Գրիգորեան իր նամակին մէջ տեղեկացուցած է, թէ արդէն իսկ դիմած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան՝ իր իրաւունքները պաշտպանելու պահանջով: «Մի քանի օր կը սպասեմ պատասխանի, որից յետոյ ինքս գործողութիւններ կիրականացնեմ՝ իմ ոտնահարուած իրաւունքները պաշտպանելու համար», - իր նամակն աչպէս եզրափակած Ռուսաստանէն արտաքսուած հայ քաղաքագետը:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութենէն «Ազատութեան» ընդամէնը փոխանցեցին, որ կը զբաղին այս հարցով: Այդ հարցով կը զբաղի նաեւ Ռուսաստանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը: Այս մասին «Ազատութեան» հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնեց դեսպանութեան խօսնակ Լեւոն Թորգոմեանը: Ար-

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՄԱՐԱՅԱԾ Է ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԶՐԱՉԵԱՅ ԹԱՄՐԱԶԵԱՆԸ



Մահացած է Հայաստանի հանրապետության Մատենադարանի տնօրեն Հրաչեայ Թամրազեանը: Tert.am-ի հետ զրույցին Մատենադարանի տնտեսական գծով փոխտնօրեն Արմեն Մկրտչեանը յայտնած է, որ Թամրազեան ծանր հիւանդություն է կր տառապէր եւ երկար ժամանակ բուժում կը ստանար: Ան նաեւ տեղեկացուց, որ Հրաչեայ Թամրազեան բուժում կը ստանար «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» Բժշկական կեդրոնէն ներս:

Հրաչեայ Թամրազեան ծնած է 1953-ին, Երեւանի մէջ: 1971-ին աւարտած է Երեւանի Ն. Կրուպսկայի անուան միջնակարգ դպրոցը, 1976-ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆաքուլտետը, 1977-ին աշխատանքի անցած է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ՝ նախ որպէս աւագ լապտերանի, ապա կրտսեր ու աւագ գիտաշխատող: 1988-91-ին Հրաչեայ Թամրազեանը աշխատած է «Սովետական գրող» հրատարակչության մէջ՝ որպէս գլխավոր խմբագիր, իսկ 1991-93-ին զբաղեցուցած է «Նայիրի հրատարակչություն» տնօրենի պաշտօնը: 1986-էն ի վեր Գրողներու միության անդամ է: 1993-ին նշանակուած է ՀՀ կառավարության առընթեր Հրատարակչական գործերու վարչության պետ, իսկ 1995-1997-ին դե-


կավարած է ՀՀ Տեղեկատուութեան նախարարութիւնը: Հրաչեայ Թամրազեանը 1997-2007 -ին համատեղութեամբ աշխատած է որպէս «Նայիրի» հրատարակչության տնօրեն եւ Մատենադարանի աւագ գիտաշխատող: 1999-ին ստացած է բանասիրական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճան: 2007-էն ի վեր զբաղեցուցած է Մատենադարանի տնօրենի պաշտօնը: 2014-էն ի վեր Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի թղթակից անդամ է:

Հրաչեայ Թամրազեանը բազմաթիւ մենագրութիւններու եւ գիտական յօդուածներու ու ուսումնասիրութիւններու հեղինակ է: Անոր ուսումնասիրութիւնները կ'առնչուին միջնադարագիտութեան՝ մասնաւորապէս նարեկացիագիտութեան բնագաւառին:

Հրաչեայ Թամրազեանը նաեւ ճանչցուած բանաստեղծ է, թարգմանիչ: Անոր բազմաթիւ բանաստեղծական եւ թարգմանական ժողովածուները ջերմ ընդունելութեան արժանացած են ընթերցողներու եւ գրականագէտներու շրջանակէն ներս: Անոր թարգմանութեամբ առանձին ժողովածուներով լոյս տեսած են Ս. Եսենինի, Վ. Մայակովսկու, Բ. Պաստերնակի ստեղծագործութիւնները, «20-րդ դարակազմի բուսական բանաստեղծութիւնը» ժողովածուն:

ՄԱՐ՝ ՄԵԾ ՎԻՊԱԳԻՐ ՎԵՏԱԹ ԹԻՐՔԱԼԻԻ

ԲԱԳՐԱՏ ԵՄՈՒԳԵԱՆ



Թրքերէն գրական աւանդի մէջ բաւական ուշ ձեւաւորուած ոճ մըն է վիպագրութիւնը: Սակայն Ի. դարու երկրորդ կէսէն սկսեալ Թուրքիոյ վիպագրութիւնը օժտուեցաւ շատ տաղանդաւոր անուններով: Այդ փաղանգին կարեւոր ներկայացուցիչներէն է վիպագիր Վէտաթ Թիրքալի, որ 26 Օգոստոսին մահացաւ իր ետին թողնելով բաւական բեղուն վաստակ մը: Իր մահէն ետք ԻՄՃ հեռուստակայանի վրայ ծանօթ շարժանկարի բեմադրիչ Սըր Սիւրէյիա Էօնտէր, երբ կը խօսէր այս հսկայի մասին յատկապէս կ'ընդգծէր անոր ընդմիջտ գարգացող բնաւորութիւնը: Թուրքալի շատերուն գարմանք պատճառելու աստիճանին կը համակերպէր նոր քաղաքականութիւններու եւ նոր ընկալումներու: Անշուշտ որ ունէր հաստատ ու ամուր համոզումներ, բայց գիտէր պահանջել հարկին այդ համոզումները կրկին ու կրկին վերատեսութեան ենթարկել: Որոշ տարիքը անցածներու համար բաւական դժուար իրագործելի յատկութիւն մը բնաւասիկ, որ իր կարգին այս մեծ հեղինակը կը պահէր կենսունակութեան մէջ:

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ • ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Հանդիսութեանց Վիտէյի Յուցարդութիւն
ԳԻՆԳՇԱԲԹԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 15, 2016
 Երեկոյեան 7:30-ին

ԹՄՍ ՊԵՇԿԵՕԹԻՐԵԱՆ ՄՐԱՅ
 1901 N. Allen Ave., Altadena, CA 91001
ՀԻՐԱՍԵՐՈՒԹԻՒՆ / ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

MEHER BABIAN, D.D.S.
 General Dentistry

1111 S. Glendale Avenue
 Suite 206
 Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
 Tel: (818) 547-1476

ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐԸ՝ ԴԵՍ ԱՌ ԴԵՍ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ (1917-1922)



Մեծ Եղեռնի պատճառով կործանումին ու աւերին վերապրող հայ մտաւորականութիւնը սկսաւ խորհրդածել դէպքին անհետեւութեան շուրջ: Թերեւս բնականօրէն, վերապրող գրագէտները իրենց տեսածը թուղթին հաղորդեցին, ինչ որ ծանօթ դարձաւ «եղեռնապատում» անունով: Ժրնեւի համալսարանի հայագիտութեան ամպլիոնի վարիչ փրոֆ. Վալենթինա Գալցուլարի-Պուվիէն վերջերս այս նիւթին շուրջ խօսեցաւ, կեդրոնանալով 1917-1922 թուականներու գրագէտ-վերապրողներուն վրայ: Հայկական Ուսմանց Ծրագիրէն պէն. Ռաֆայէլ Գրիգորեանը ներկայացուց դասախօսը:

Փրոֆ. Գալցուլարի իր դասախօսութեան սկսաւ այն հաստատումով, որ եղեռնապատումը, առաջին հերթին, հակազդեցութիւն մըն էր ցեղասպանութեան եւ վկայութիւն մը՝ գրագէտներու փորձընկալումին մասին: Ան նշեց երկու գլխաւոր ձեւեր, որոնք այս գործին գրաւոր արտայայտութիւնը դարձած են: Առաջինը «գիրք-պատկեր» էր (livre-image), որուն նպատակը եղած է ընթերցողին յայտնել, թէ դէպքերը ինչպէ՞ս պատահած էին, իսկ երկրորդը՝ «գիրք-վերակազմութիւն» (livre-reconstitution), որ փորձած է բացատրել, թէ դէպքերը ինչո՞ւ պատահած են: Ամենէն ժողովրդական ընտրութիւնը «գիրք-պատկեր» էր, ընթերցողը դէպքերու վկայ դարձնելու ձեւ մըն էր՝ պատկերներու, տպաւորութիւններու, դրուագներու եւ յուշերու ընդմէջէն:

Փրոֆ. Գալցուլարի առաջին հերթին ակնարկեց Զապէլ Նսայեանին, որուն գրական ասպարէզի հիմնական բաժինը սկսած էր 1909ին Կիլիկիա երթալէ ետք՝ իբրեւ անդամ Պոլսոյ Պատրիարքարանի պատուիրակութեան մը: 1911ին ան հրատարակած էր «Աւերակներու մէջ» գործը, որ կիլիկիահայութեան թշուառ վիճակը կը նկարագրէր Ատանայի Զարդերէն ետք: Գալցուլարի ակնարկեց քիչ ծանօթ գործի մը՝ «Գրագէտի մը յիշատակներ», գործնական գրած էր 1915ին Պուլկարիա փախուստ տալէ ետք, պատմելով Ապրիլ 24ին ձերբակալութիւններուն մասին: Նման գործի մը գրառումին ենթադրած վտանգը կանխելու համար, գրագիտուհին ծպտուած էր «Վիզն» արական գրչանունի ետին: 1917ին Նսայեան հրատարակած է «Ժողովուրդի մը հոգեվարքը», ուր եղեռնապատումին հանդէպ անոր մօտեցումը կը փոխուի, երբ ան կը

պատմէ այլ կերպարի մը՝ Հայկ թորոյեանի յուշերը: Կը տեսնենք, թէ ինչպէ՞ս քաղաքական մթնոլորտի փոփոխութիւնը՝ «Աւերակներու մէջ» էն մինչեւ «Ժողովուրդի մը հոգեվարքը» երկարող ժամանակաշրջանին, ազդած է Նսայեանի մօտեցումին վրայ՝ հայոց տառա-

պանքներուն մասին գրելու ատեն: Առաջին գործին մէջ, ան բոլոր օսմանցի հայրենակիցներուն՝ թուրքեր եւ հայեր ներառեալ, կոչ կ'ուղղէր իրավիճակին խողող լուծում փնտռելու եւ գոյակցութեան միջոց ստեղծելու: Այդպիսի նախաձեռնութեան մը անկարելիութիւնը բացայայտ դարձած ըլլալով, վերջին գործը միայն հայերուն եւ օտարներուն ուղղուած էր, քանի որ այս ժամանակաշրջանին հայերը կը պայքարէին իրենց հայրենիքին մէկ մասը պահպանելու եւ սեփական պետականութիւնը հաստատելու ի խնդիր:

Պոլսահայ ուրիշ գրագէտ մը՝ Երուանդ Օտեան, սուրիական անպատի տարագրութեան իր յուշերը գրի առած է «Անիծեալ տարիներ» գործին մէջ: Այստեղ, Օտեան դժոխային տեսարաններ կը նկարագրէ, գորս «ոչ մէկ Տանթէ պիտի կարողանար երեւակայել», բայց չի մեկնաբաներ այն տեսարանները, որոնց ականատեսը եղած է: Հետեւաբար, ասիկա տրիպար «գիրք-պատկեր» մը դարձած է:

1918էն ետք, վերաշխուժացումի յոյսի կայծ մը կար Պոլսոյ մէջ: Այս ժամանակաշրջանին, երբ տարագրութիւնը արդէն իր աւարտին հասած էր, գրական կեանքը կը

վերակենդանանար: Գրական հանդէսներ կը սկսէին կամ կը շարունակուէին, ինչպէս «Ամէնուն տարեցոյցը», «Շանթ» եւ «Բարձրավանք»: Այս գրական գործունէութիւնը կը թուէր կազմել այն միջոցը, ուր սպաննուած հայերը կը ստանային իրենց երբեք չունեցած պատշաճ յուղարկաւորութիւնն ու թաղումը: Այս շրջանի գրականութիւնը վկայութեան գրականութիւն էր. գրողները պէտք կը զգային այս ոճով գրելու, կարծէք պարտաւոր ըլլալով յաւերժացնել զոհերուն յիշատակը, բայց նաեւ՝ անոնց հոգիներուն հանգիստի վայր մը տալ: Գոյութեանական աշխատանք մըն էր նաեւ. վերապրող գրագէտները կը ջանային իրենց վերապրումին իմաստաւորումը գտնել այն տրամաբանութեան մէջ, որ տեսածն ու փորձընկալածը վկայել էր իրենց նպատակը:

Փրոֆ. Գալցուլարի երկարօրէն անդրադարձաւ Գրիգորիս եպս. Պալաքեանին, որ տարագրութեան իր փորձառութիւնն ու տպաւորութիւնը արձանագրած է «Հայ Գողգոթա»-յի մէջ՝ «գիրք-պատկեր» ի ուրիշ օրինակ մը: Պալաքեան զգացած էր, որ անկարելի, «անպատ-

Շար.ը էջ 19

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.

«Քաջ Նապար» հանդէսն ու հեռուստաժամը ներկայացնում է

17-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՊԻ ԲՈՄԵԱՊՐԱՄԻ, ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՎԱԾՈՒՐԿ ԵՒ ԲԱԾՄԱՆՎԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ

Կիրակի, Սեպտեմբեր 25, 2016, ժամը 3-12:00

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.

and "KACH NAZAR" Magazine and TV Show

Presents

17th ANNIVERSARY TELETHON

ON SUNDAY, SEPTEMBER 25, 2016

FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES

Մեր Ապագան, մեր Մերուոյն է:

OBLIGED TO HELP ARMENIA'S NEXT GENERATION

Please mail your check to (A.A.O.C. FUND,) P.O.BOX 250038, GLENDALE, CA 91225 or to 626 West Colorado Street, Glendale, CA 91204 USA Tel: 818-246-2070

Tel: 818-246-0125 • 818-239-6880 • 818-292-9619
E-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com
Non-Profit Organization. a Tax Exempt 501 (c) 3 Charity.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՎԱՐԷ ՍԵՍՐՈՊԵԱՆ

Մեր մեծ բանաստեղծին նուիրուած պոեզիայի երեկոն, որ կազմակերպուեց Գիտնականների նախապատրաստման դպրոցում ԱՄՆ Հայ Գրողների միութեան կողմից, նշանակալից իրադարձութիւն էր լուսանջելեսյան հայ համայնքում: Հարկաւոր է նշել, որ դպրոցի դահլիճը յօժարակամ հայ գրողներին էր տրամադրել դպրոցի տնօրէն, դոկտոր Աննա Գիրգորեանը, ով գրականութեան, պոեզիայի, մշակութի մեծ սիրահար է: Նա իր սեփական նախաձեռնութեամբ էր առաջարկել ԱՄՆ հայ գրողներին իրենց միջոցառումներն իր դպրոցի դահլիճում անցկացնելու համար: Նրա բարձր կազմակերպութեան, խստաբարոյ կեցուածքն ու պահանջկոտութիւնն արտացոլում էր դպրոցի աշակերտների առաջադիմութեան, դաստիարակութեան եւ դպրոցի հեղինակութեան վրայ: Դպրոցի աշակերտները բազմաթիւ ուսումնական յաջողութիւնների են հասել եւ շրջանաւարտներն այսօր սովորում են ճանաչուած համալսարաններում:

Երբ բարձրաձայնում էի թուամանեանի պոեզիայի երեկոյի մասին այս կամ այն միջավայրում կամ հեռախօսազանքով, եւ՛ գրողները եւ՛ մասնակցել ցանկացողները մեծ ոգեւորութեամբ էին ընդունում հրաւերը: Մի քանիսը նոյնիսկ ափսոսացին, որ չեն կարողանալու մասնակցել նախապէս պայմանաւորուած թիւերի պատճառով:

Այդ հրաւերքների ժամանակ մարդկանց մօտ միանգամից նկատում էր տրամադրութեան բարձրացում, հետաքրքրութիւն, թէ ով է բանախօսելու, ով է ելոյթ ունենալու... Այսպիսի վերաբերմունքը դժուար չէր ակնկալել, որովհետեւ թուամանեանը «Ամենայն Հայոց բանաստեղծն» է, ինչպէս ինքն է իրեն անուանել, ի պատասխան Գէորգ կաթողիկոսի, ով վէճի էր բռնուել գրողի հետ, ասելով, թէ «Դուք խօսում եկ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ»: Բայց դա կարելի չէ, որ ինքն է իրեն այդպէս անուանել: Նա իսկապէս Ամենայն Հայոց Բանաստեղծն է, որովհետեւ հայ ժողովուրդն է այդպէս ընկալում բանաստեղծին: Նրա ժողովրդականութիւնն այնքան բարձր է, որ ոչ ոք ուրիշ կարծիք չի յայտնում, որովհետեւ նրա ստեղծագործութիւնները շատ հոգեհարազատ են ընթերցողների շրջանում, այնքան հավանալի, այնքան խորը ըմբռնելի թէ մանուկի թէ մեծահասակի համար: Հայ ազգը թուամանեանին ընկալում է նաեւ «Այս հմուտ, հանճարեղ լուսեցի» բնորոշմամբ, որը նրա մասին ասել է ոչ պակաս հանճարեղ բանաստեղծ Եղիշէ Չարենցը: Չարենցը նաեւ գրել է.

Կա Մեծարեց, կա Տրեւան, եւ բազում ուրիշ պոետներ կան,

Բայց թումանեանն է անհաս Արարատը մեր նոր քերթութեան:

Այսինքն թուամանեանը մեր մեծ գրողներից՝ Մեծերի Մեծն է: Թուամանեանի ստեղծագործութիւններում եւ փիլիսոփայութիւն կա եւ պարզութիւն, որոնք հասանելի են տարբեր խաւեր ներկայացնող ընթերցողներին:

Յովհաննէս Թուամանեանի պոեզիայի երեկոն նկարահանուեց

ARTN «Շանթ» հեռուստա-ընկերութեան կողմից եւ լուրերի շրջանակում ցուցադրուեց Օգոստոսի 29-ին:

Դպրոցի տնօրէն Աննա Գիրգորեանի բացման խօսքից յետոյ ԱՄՆ հայ գրողներ միութեան նախագահ Վազգէն Վանատուրը հակիրճ ներկայացրեց թուամանեանին, նշելով, որ այս օրերին՝ 22 տարի առաջ թուամանեանի սիրտը բերուեց Երեւան: Այնուհետեւ լուսեց անկրկնելի Սուրէն Քոչարեանի «Լուսեցի Սաքոն» պոեմի արտասանութեան ձայնագրութեան մի հատուած՝ «էն Լուու ձորն է ուր հանդիպակաց»... Եւ բեմի խորքում, սեղանների շուրջ լապտերի լոյսի տակ նստած Կարեն Խաչատրեանն ու Մարգարիտ Դերանցը եւ Կարեն Գայտեանն ու Ֆիրա Ակեանը միմեանց յաջորդելով կարճ տեղեկութիւններ էին տալիս թուամանեանի կեանքից, ստեղծագործութիւններից, հուշերից, որոնք ընդմիջում էին հայ համայնքում ճանաչուած երգիչների ու ասումունքողների ելույթներով:

Ռոմանների ու «Անուշ» օփերայից հատուածների կատարմամբ հանդէս եկաւ էլեգանտ, գեղեցկուհի Սօսի Մարտիրոսեանը, ում նուազակցում էր Ալբերտ Բուլղարականը: «Բարձր Սարեր» երգի հիանալի կատարմամբ ներկաներին ողջունեց Երեւանի Օփերայի եւ բալետի նախկին երգիչ Արտաշէս Հայրեանը, ժողովրդական երգերի կատարումով իր կատարողականութիւնը ներկայացրեց Նշան Զաղաջպանեանը, հեղինակային երգերի իւրապատուկ կատարող Ժիրայր Պարսամեանի ներկայացրած երգերին՝ թուամանեանի մոտիվներով, ձայնակցեց ամբողջ դահլիճը: Բուռն ծափողոյններով ընդունուեց Կարեն Խաչատրեանի «Թմբկաբերդի Առումը» պոեմի արտասանութիւնը եւ Սեդա Դեմիրճեանի կողմից «Հառաչանք» պոեմից հատուածների ներկայացումը:

Թուամանեանի պոեմների մասնագիտական վերլուծութեամբ հանդէս եկաւ գրողների միութեան պատուաւոր անդամ Գէորգ Քրիստինեանը: Թուամանեանական մոտիվներով գեղեցիկ, սլացիկ պար

ցուցադրեց Աննա Խուրդուզեանը, Ս վ ե տ լ ա ն ա Տ ո ն ա պ ե տ ե ա ն ն իրեն յատուկ ոճով կար-դաց Պարոյր Սեւակի «Անլուելի Ձան-գակատուն» պոեմից «Ղողանջ Աւետիսի» հատուածը եւ «Պատրանք» բանաստեղծութիւնը: Բաւականին հաճելի զվարթութեամբ «Հին Օրհնութիւն» բանաստեղծութիւնը արտասանեց Զուարթ Ֆրոեանը, իսկ «Թուամանեանի հետքը գրականութեան մէջ» ծաւալուն վերլուծութեամբ հանդէս եկաւ Պօղոս Լազիսեանը, ում գրքից, հաղորդման օրը հատուածներ մէջբերեցին՝ որպէս հաւաստի տեղեկութիւն, ՀՀ Հ1 հեռուստակայանով լուրերի հաղորդման ժամանակ՝ կապուած «Անուշ» պոեմում գործող անձանց՝ Սարոյի եւ Մոսիի իրական դէմքեր լինելու մասին: Հետաքրքիր մեկնաբանութեամբ Ռուզաննա Մխիթարեանը մեզ հետ «գրուցեց» թուամանեանի «Կայսէս չի մնա» հին գրոյցով: Թուամանեանական մոտիվներով մի փոքրիկ բեմականացուած երգ ու պարով հանդէս եկան հայ գրողներին միշտ սատարող, տարբեր հարցերում օգնող Վահէ Աւետիսեանը եւ Անժել Սիմոնեանը:

Ամբողջ երեք ժամ տեւած այս հոգեհարազատ երեկոն վայելեցին շուրջ 60-70 գրողներ եւ հիւրեր:

Ուզում եմ նշել նաեւ, որ թուամանեանը ոչ միայն գրող էր ու բանաստեղծ, այլ մեծ հայրենասէր, հումանիստ ու ազգային գործիչ: Ինչպէս կարելի է մոռանալ սպիտակ դրօշը պարզած նրա այցելութիւնները հայկական եւ թուրքերով բնակեցուած գիւղերը, որտեղ նա խաղաղութիւն, հանդուրժողականութիւն, բարեկամութիւն էր քարոզում բնակիչներին՝ ազգամիջեան բախումները կանխելու նպատակով: Մեծ գնահատականի է արժանի եւ օրինակելի (ի հակակշիռ



այսօրեայ հայ իշխանաւորների եւ որոշ մտաւորականների) գորավար Անդրանիկին գրուած նամակը, որտեղ նա գրում է, որ իր չորս որդիները գորավարի տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկներն էլ կկատարեն այն աշխատանքները, ինչի որ ընդունակ կլինեն, միայն թէ հետ մղեն վերահաս վտանգը: Եւ ի յաւելում, պարտաւորուած է ամեն ամիս 100 ուրբի տրամադրել ընդհանուր գանձարանին: Սա այն դէպքում, երբ թուամանեանի աղջիկն իր հուշերում գրում է, որ հայրը անընդհատ պարտքերի մէջ էր... Թէ եկ ու համեմատիր այսօրեայ իշխանաւորների, մտաւորականների օլիգարխների հետ...

Իսկ Աւետիք Իսահակեանին գրուած նամակում կարծես շարադրում է այսօրեայ Հայաստանի իրավիճակը. «...մենք թէ ներսից, թէ դրսից քանդեցինք մեր երկիրը: Մի մասը խանգարող սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը թշուառականներ... ոչ մի մեղաւոր չերեւաց, ոչ ոք ոչ պատասխանատուութեան կանչուեց ոչ պատասխան տուեց...»: Նման իրավիճակ է չէ՛ յարգելի ընթերցող այժմեան Հայաստանում: Պատ-

Շար.ը էջ 18

2016-Ի ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



ՊԵՊՕ ՄԻՄՈՆԵՆՆ

Պեպո Միմոնեան ԳՐԱՎԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Պեպո Միմոնեան բանաստեղծի, գրականագետի, մշակութաբանի, մանկավարժի եւ հանրային գործիչի խոհերը կեանքի, ժամանակի, հայրության եւ աշխարհի մասին:



ՀԵՅ ՍՎԱՌՄԻՆ ՓԻՂԵՅՈՅՑԸ

Հովանաբանութեամբ՝ Հ.Մ.Մ.ի Կերտական Վարչութեան

Սկստական կրթութեան անհրաժեշտութիւնը հայ նորահաս սերունդներու մէջ արմատատրելու լիարժէք սնորհու յատկութիւնները:

Նազելի Էպիտան-Նազլիսեան **ՀԱՅ ՍՎԱՌՄԻՆ ՈՒՂԵՅՈՅՑԸ**

ԿԸ ՎԱՃԱՐՈՒԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԱՏՈՒՆՆԵՐԸ

<p>ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ ABRIL BOOKSTORE 415 East Broadway • Glendale, CA 91205 abrilbook.com 818 • 243 • 4112</p>	<p>ՊԵՐՃ ԳՐԱՏՈՒՆ BERJ BOOKSTORE 422 South Central Avenue • Glendale, CA 91204 818 • 244 • 3830</p>
---	--

ԻՆՉՊԵՍ ՄԵԾՑՆԵԼ ԿԱՄՔԻ ՈՒԺԸ

Թէեւ շատերը կը կարծեն, որ կամքի ուժը բնածին տրուած երեւոյթ է՝ հոգեբանները կը պնդեն, որ անհիկա կարելի է աւելի մեծցնել ու աւելի կամային դառնալ: Այսպիսով, ինչ պէտք է ընել կամքի ուժը «մարգելու» համար:

Մտախոհութիւն (meditation)
Մտախոհութիւնը որոշ մարդոց համար հաւանաբար կը թուի բաւական ձանձրալի եւ անիմաստ զբաղմունք, բայց անհիկա կրնայ օգնել ձեզի կամքի ուժը մեծցնելու հարցով:

Մտախոհութեան առաջին օրերուն, ձեր գիտակցութիւնը պիտի փորձէ խանգարել եւ ստիպել ձեզի լանձնուել: Սակայն դուք կրնաք վերահսկել ձեր մտքերն ու ստիպել գիտակցութեան լուել: Ընդունեցէք մտախոհութեան դիրքը եւ խոր շնչեցէք ու արտաշնչեցէք: Քանի մը օր անց դուք պիտի նկատէք, որ դուք աւելի դիւրութեամբ կը կեդրոնանաք ձեր խնդիրներուն վրայ եւ չէք շեղիր:

Հետեւեցէք ձեր կեցուածքին
Գիտնականները ապացուցած են, որ աւելի կամային դառնալու համար պէտք է ուղղել կեցուածքը: Ուսումնասիրութիւններուն մասնակցած կամաւորները, երկու շաբաթ հետեւելով իրենց կեցուածքին, դարձած են աւելի կամային, որ պարզ դարձած է յատուկ փորձարկումներու միջոցով: Ուստի, մշտապէս ուղղեցէք կեցուածքը:

Սննդականոն
Կամքի ուժին վրայ դրական ազդեցութիւն կրնայ ունենալ նաեւ յստակ սննդականոնը: Պարզապէս պէտք է ճիշդ ժամանակին ուտել եւ երբեք չչեղիլ սահմանուած վարչաձեւէն:
Հետեւեցէք ձեր խօսքին

Ասիկա կամքի ուժը փորձելու եւ գայն աւելի ամրացնելու հիանալի միջոց է: Պէտք է հետեւիլ ձեր խօսքին եւ փորձել ճիշդ, պարզ, լակոնիկ, հոմանիշներով հարուստ խօսք օգտագործել: Այսինքն՝ աւելի գեղեցիկ խօսիլ: Մէկ ամիս անց գրագէտ խօսքը ձեզի համար այլ լեւա ոչ մէկ դժուարութիւն չի յառաջացներ:

Յստակ նպատակներ
Ձեր չիրականացած ծրագիրները բացասական հետեւանքներ կրնան ունենալ ձեր կամքի ուժին վրայ: Սակայն յուսահատելէ առաջ պէտք է հասկնալ, թէ որքան իրական էին այդ նպատակները, որքան միջոց, ուժ եւ եռանդ ներդրած էք անոնց իրականացման հարցով: Բայց այս ամէնէն խուսափելու համար պէտք է յստակ եւ ճիշդ նպատակներ ունենալ:

Մարզուիլ
Գաղտնիք չէ, որ մարզաձեւի մը հետեւիլն ու մարզումները աւելի կամային կը դարձնեն մարդը: Հետեւաբար, եթէ կը փափաքէք «մարզել» կամքի ուժը, քանի մը ամիս գացէք մարզուելու: Այնուհետեւ ատիկա սովորութիւն պիտի դառնայ ձեզի համար եւ դուք նոյն եռանդով պիտի շարունակէք:

Ուշադրութիւն դարձուցէք ձեր շրջապատին
Եթէ կը փափաքէք վերահսկել ձեր կամքի ուժը, պէտք է նաեւ ուշադրութիւն դարձնէք ձեզ շրջապատող մարդոց: Կան մարդիկ, որոնք կը սպառեն ձեր ուժն ու կը նուազեցնեն կամքի ուժը: Պէտք է ազատիլ անոնցմէ: Պէտք է շփուիլ այնպիսի մարդոց հետ, որոնք օրինակ, «մարտկոց» ըլլան ձեզի համար եւ զանոնք տեսնելով դուք մեծ եռանդով կը լեցուիք:

ՏԱՍԸ ԵՐԵՒՈՅԹ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ՅԻՇԵԼ

Ամբողջ կեանքի ընթացքին կը սպասես մէկուն, որ կը հանդիպի եւ կ'ընդունի քեզ այնպէս, ինչպէս որ ես, բայց յետոյ կը հասկնաս, որ դու երբեք ալ առանձին չես եղած, քանի որ դու քեզի ունիս: Քու կեանքդ ՔՈՒ ձեռքերուդ մէջ է եւ ՈՉ ՄԵՆԿԸ կրնայ երջանկութիւն պարգեւել քեզի: Այս հարցով քեզի կ'օգնեն հետեւեալ տասը խորհուրդները: 80/20-ի օրէնքը

Փարէթոյի կամ 80/20-ի օրէնքը կը նշանակէ՝ 20% ջանք եւ 80% արդիւնք, իսկ ուժերու մնացած 80%-ը կու տան 20%-ի արդիւնք: Օրինակ՝ պարտադիր չէ մառանը կամ նկուղը ամէն օր մաքրել, քանի որ անոնք այնքան ալ յաճախ չեն օգտագործուիր, իսկ խոհանոցը կամ լոգարանը ամէնօրեայ մաքրութեան պէտք ունին: Այսպիսով, ձեր բնակարանին մէջ սենեակներու 20%-ը կը պահանջեն ձեր ուշադրութեան եւ ջանքերուն 80%-ը:

Այս պարագային տունը մաքրելու խնդիրը աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծուի: Կեդրոնացիր եւ ժամանակը ծախսէ արդիւնաւէտ գործերու վրայ:

Փարքինսընի օրէնք
Համաձայն Փարքինսընի օրէնքին՝ աշխատանքը կը սպառէ անոր կատարման յատկացուած ամբողջ ժամանակը: Այսինքն՝ եթէ գործատուն կը յանձնարարէ մէկ ամսուան մէջ կատարել աշխատանք մը, որ կարելի է աւարտին հասցնել մէկ շաբթուան մէջ, ապա աշխատողը անպայման անհիկա կ'ընէ մէկ ամսուան մէջ՝ դժուարացնելով եւ երկարացնելով աշխատանքը կատարելու գործընթացը: Ան չի կեդրոնանար հակառակ եւ հիմնական խնդրի լուծման վրայ եւ ժամանակը արդիւնաւէտ ձեւով չ'օգտագործեր: Իսկ եթէ սահմանուած ժամկէտը ըլլայ մէկ շաբաթ, ան պիտի կեդրոնանայ իր գործին վրայ եւ արդիւնաւէտ ձեւով պիտի կատարէ զայն: Այսինքն՝ պէտք է աւելի արագ գործել:

Տալ, իսկ յետոյ ակնկալել
Ասիկա ճիշդ հերթականութիւնն է: Սկիզբը պէտք է տալ, իսկ յետոյ ակնկալել, քանի որ միայն այսպէս դու կը ստանաս այն, գոր կը փափաքէիր եւ կ'երագէիր: Յիշէ, աշխարհի վրայ ամէն վայրկեան կ'իրականանայ ուրեք մէկուն երազանքը: Վաղը հաւանաբար քու կը

կատարուի: Ոչ մէկը երբեք իր տուածէն աւելին չէ ստացած:

Սխալներ եւ անյաջողութիւններ

Անոնք անգնահատելի փորձ կրնան ըլլալ քեզի համար: Անյաջողութիւնները կրնան խթան դառնալ յաջողութեան ճանապարհին: Սխալներէն պէտք չէ հրաժարուիլ, անոնք երբեմն կրնան դրական ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ: Ծանօթացիր եւ ազատօրէն շփուիր նոր մարդոց հետ: Իւրաքանչիւր հանդիպում պատմութիւն մըն է եւ անոր պէտք է լուրջ վերաբերիլ: Եթէ անծանօթ մարդոց հետ կը շփուիս այնպէս, ինչպէս մտերիմներուդ, ուրեմն աւելի ինքնավստահ, աւելի անկեղծ մարդու տպաւորութիւն կը ձգես եւ դրականօրէն կ'ազդես դիմացինիդ վրայ:

Վաւաստեցութիւնը կրնայ փոխել իրականութիւնը

Յոռետեսութիւնը կը թաքնուի իրականութեան դիմակին տակ եւ միայն լաւատեսութեամբ կրնաս փոխել զայն:

Երախտագիտութիւն՝ պարզ միջոց էրջանկի գզալու համար Հիանալի միջոց շրջապատի հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու, անոնց ուրախութիւն պարգեւելու եւ ինչու ոչ, երջանկանալու համար. չէ որ երջանկութեան զգացումը վարակիչ է:

Մի համեմատեք քեզ ուրիշներու հետ եթէ դու քեզ կը համեմատես ուրիշներու հետ, ուրեմն կ'արտօնես, որ արտաքին աշխարհը ղեկավարէ քեզ: Իբրեւ արդիւնք տրամադրութեան անկումը անխուսափելի է: Աւելի ճիշդ եւ արդիւնաւէտ պիտի ըլլայ, եթէ համեմատես նոյնինքն դու քեզ հետ, որպէսզի տեսնես, թէ որքան աճած ես, զարգացած եւ ինչ նուաճումներ արձանագրած ես:

Վախի աչքերը շատ մեծ են
Վախերուդ 80-90%-ը երբեք տեղի չ'ունենար: Անոնք միայն կը ծնին եւ կ'ապրին զլխուդ մէջ: Անհանգստութիւնը ժամանակի եւ ուժի անիմաստ կորուստ է:

Ամէն ինչին շատ լուրջ ձեւով մի վերաբերիր Այսօրուան խնդիրներէն շատերը վաղը նոյնիսկ պիտի չ'իշխես: Եթէ զգացումներուն եւ միտքերուն շատ լուրջ կը վերաբերիս, կը սպառես ուժերդ: Մտածէ միայն դրական երեւոյթներու մասին:

ԻՆՉՊԵՍ ԾԻՇԴ ԶԵՒՈՎ ԸՆԴՀԱՏԵԼ ԶՐՈՅՑԸ՝ ԶՆԵՂԱՑՆԵԼՈՎ ԶՐՈՒՑԱԿԻՑԸ

Յաճախ պէտք կ'ըլլայ ընդհատել գործնական խօսակցութիւնը, սակայն վախը, որ կրնաս նեղացնել խօսակցիցը, չի ձգեր ընել ատիկա: Ներկայացնենք քանի մը խորհուրդ...

1. Ծնորհակալութիւն յայտնեցէք (բովանդակալից զրոյցի, տեղեկութեան, անկեղծութեան, ժամանակ տրամադրելու համար եւ այլն):
2. Հակիրճ ձեւով բացատրեցէք, թէ ինչ մտադիր էք ընել եւ

ցոյց տուէք, որ անմիջապէս ձեռնամուկ պիտի ըլլաք այդ գործին:

3. Ոսակիցին առաջարկեցէք շտապ որեւէ բան ընել, բացատրելով, թէ ինչու պէտք է ատիկա անյապաղ կատարել:

4. Ոտքի կանգնեցէք, սեղմեցէք ձեռքը, հրաժեշտ տուէք:

5. Այցելուին ուղեկցեցէք մինչեւ դուռը:

6. Գործողութեան մէջ դրէք «փրկութեան մասին համաձայնագիրը» գործընկերոջ հետ:

3 ՀԻՄՆԱԿՈՐ ՊԱՏՃԱՌ՝ ԶԿԱՆ ԻԴՐԸ ԱՇՆԱՆ ԵՒ ԶՄՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հիւանդութենէ ամենալաւ պաշտպանութիւնը ժամանակ առ ժամանակ առողջութեան հետեւին է: Բայց, չես գիտեր ինչու, մարդոց մեծ մասը իր առողջութեան մասին կը չի շօնարար, երբ ցուրտ է, եւ կը սկսի վարակիչ հիւանդութիւններու շրջանը: Երբ կը նկատես, որ հանրակառքերը լեցուն են փուշտացող եւ հազացող մարդոցմով, յանկարծ կը հասկնաս, որ մարմինը պէտք է պաշտպանել հիւանդութիւններէն: Լաւագոյնը, ինչ որ կարելի է առաջարկել այդ պարագային, ձկան իւղն է:

Ձկան իւղի բաղադրութեան մէջ կը մտնեն մեծ քանակութեամբ վիթամիններ, հանքանիւթեր եւ օմեկա-3 թթուներ, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ անոր լիարժէք աշխատանքին համար: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ ձկան իւղի պարբերաբար օգտագործու-

մը կը նուազեցնէ սրտի կաթուածի, ինչպէս նաեւ՝ սիրտանոթային հիւանդութիւններու յառաջացումը:

Ապացուցուած է, որ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը դրականօրէն կ'ազդէ դիմադրողական համակարգին վրայ: Ըստ որոշ հետազոտութիւններու՝ օմեկա-3 թթուները զգալիօրէն կը նուազեցնեն քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը:

Ձկան իւղը կը կայունացնէ զարկերակային ճնշումը: Ձայն կը նշանակեն թոքախտի, ուստի, անեմիայի պարագային:

Խորհուրդ կը տրուի դաշտանի ցաւի, յղութեան բարդութիւններու պարագային:

Կ'արտօնուի օգտագործել ճարպակալման, շաքարախտի, օսդոսփորոզի, փսորիակի պարագային:

Դրական ազդեցութիւն կ'ունենայ ջրային համակարգին վրայ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ԱԱ-2018. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԱՐԿԵՑ



Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը պարտութիւն կրեց 2018 թուականի աշխարհի առաջնութեան ընտրական փուլի մեկնարկային խաղում:

Կոպենհագենում Դանիայի հետ կայացած հանդիպումն անցաւ յորդառատ անձրեւի ներքոյ: Հայ ֆուտպոլիստները դեռ չէին հասցրել յարմարուել թաց խոտածածկին, երբ դաշտի տէրերը 17-րդ րոպէին արագ գրոհ կազմակերպեցին եւ Քրիստիան էրիկսենը հաշուենկատ հարուածով բացեց հաշիւը:

Յետագայում մերոնցից ֆուտպոլ էր խաղում միայն դարպասապահ Արսէն Բեգլարեանը, որը բազմիցս փրկեց իր թմին վերահաս վտանգներից, անգամ ետ մղեց դարպասին նշանակուած 11մ հարուածը: Իսկ անա միւս գծերի ֆուտպոլիստները բոլորովին չէին հասկանում միմեանց, անընդհատ սխալներ էին թողնուած տալիս, ուշանում էին մրցակիցներին, շատ դանդաղ էին գործում: Ճիշդ է, հանդիպման վերջում դանիացիներն իրենց կիսադաշտում կոպիտ սխալուեցին եւ Մարկոս Պիգելին յայտնուեց դարպասապահի դէմ դիմաց, սակայն յապաղեց եւ կորցրեց յարմար պահը:

Այդպիսով, 2018 թուականի աշխարհի առաջնութեան ընտրական փուլի առաջին խաղում Հայաստանի հաւաքականն 0:1 հաշուով պարտուեց Դանիայի ազգային թիմին: Մեր ընտրանին միանգամից դարձաւ խմբի յետնապահը, քանի որ գուզահեռ ընթացող Հազարաստան - Լեհաստան խաղն աւարտուեց ոչ-ոքի՝ 2:2:

ՀԱՕԿ-Ը ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ Է ՄԻՅՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ ՄԵՆԱՄԱՐՏԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Հայաստանի օլիմպիական կոմիտէն Լոզանի մարզական արբիտրաժային դատարանում կը բողոքարկի Ռիոյի օլիմպիական խաղերում հայ ըմբիշ Միհրան Յարութիւնեանի պարտութիւնը՝ փորձելով արծաթի փոխարէն ոսկէ մետալը ստանալ: Այս մասին յայտարարեց օլիմպիական կոմիտէի գլխաւոր քարտուղար Հրաչեայ Ռոսստոմեանը:



«Մենք այնտեղ լուրջ խնդիրներ ունենք, կապուած այն բանի հետ, թէ ինչի համար ենք բողոքարկում: Մենք պէտք է բողոքարկենք պասիւռութեան համար, բայց պասիւռութիւնն ինքն իրենով մրցավարների սուբիեկտիւ որոշումն է: Մենք իրաւաբաններ ենք վարձել, միջազգային: Հայ չեն, ի դէպ, ասեմ: Նրանք հիմա աշխատում են այդ ուղղութեամբ: Երբ իրենք կը տան իրենց եզրակացութիւնը, թէ մենք ինչ ձեւաչափով կարող ենք բողոքարկել, անմիջապէս այդ բողոքարկումը կը լինի», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Ռոստոմեանը:

Յունահունկական ոճի ըմբշամարտի՝ Հայաստանի հաւաքականի անդամ Միհրան Յարութիւնեանը 31-րդ Օլիմպիական խաղերի եզրափակիչ մենամարտում ոսկէ մետալը վիճարկում էր սերբ մրցակցի հետ պայքարում: Մենամարտի աւարտին գրանցուեց 1-1 հաշիւ, եւ քանի որ սերբ մարզիկը վերջինն էր միաւոր վաստակել, մրցավարները յաղթանակը նրան շնորհեցին: Հայ մարզիկը պնդում է, որ ինքն անարդար մրցավարութեան արդիւնքում է պարտուել, մինչդեռ՝ Հայաստանի Օլիմպիական կոմիտէն իր կայքում նշել էր, թէ «Յարութիւնեանը փոխախոյան է դարձել գեղեցիկ եւ յամառ պայքարում»:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի հաւաքականը Պրագի լիայի ամառային օլիմպիական խաղերում վաստակեց 1 ոսկէ եւ 3 արծաթէ մետալ: Օլիմպիական կոմիտէի քարտուղարն այս արդիւնքը գոհացնող է համարում՝ «Բնականաբար, մենք կարող էինք անել աւելին, եղան բացթողումներ, եղան այնպիսի բաներ, որ մեր վերահսկողութիւնից դուրս էին, օրինակ՝ Անդրանիկի ձեռքը... ուղղակի նոստենս էր»:

Չնայած, որ յայտարարուել էր, թէ այս օլիմպիադային Հայաստանից

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՅԱՂԹԵՑ ԽՈՇՈՐ ՀԱՇՈՒՈՎ ԱՆԳԼԻԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԿՈՐՉԵՑ ՎԵՐՁԻՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԻՆ

Աշխարհի գործող ախոյեան Գերմանիայի հաւաքականը յաղթանակով մեկնարկեց աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում: Ը խմբում ընդգրկուած Բուլղարիայի մին առաջին տուրում 3:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ Նորվեգիայի նկատմամբ: Դուբլի հեղինակ դարձաւ Միլենիենի «Բավարիայի» կիսապաշտպան Թոմաս Միւլլերը, մէկ անգամ էլ աչքի ընկաւ նրա ակումբակից Ջոշուա Կիմիխը:

Բխմբի գլխաւոր ֆաւորիտ անգլիացիները մրցակցի խաղադաշտում նուազագոյն հաշուով յաղթեցին Սլովակիայի հաւաքականին: Միակ կողմ աւելացուած ժամանակի 5-րդ րոպէին խփեց «Լիվերպուլը» կիսապաշտպան Ադամ Լալանան: Սլովակները Մարտին Շկրտելի հեռացման պատճառով 58-րդ րոպէից խաղում էին 10 ֆուտպոլիստներով:

Ե խմբում Հայաստանի հաւաքականի մրցակիցներ Ռուսիայի ու Չեռնոգորիան բաժանուեցին ոչ ոքիով՝ 1:1: Ռուսիայում կայացած խաղի 2 կողերն էլ գրանցուեցին վերջնամասում:

Ե խմբի միւս խաղում, Լեհաստանն ու Հազարաստանը մարտական ոչ ոքի էին խաղացել Աստանայում՝ 2:2:

ԱԱ-2018-ի ընտրական փուլ, եւրոպական գօտի

- Ը խումբ
- Նորվեգիա - Գերմանիա՝ 0:3
- Չեխիա - Հիւսիսային Իռլանդիա՝ 0:0
- Սան Մարինո - Ատրպէյճան՝ 0:1
- Ե խումբ
- Ռուսիայի - Չեռնոգորիա՝ 1:1
- Հազարաստան - Լեհաստան՝ 2:2
- Բ խումբ
- Մալթա - Շոտլանդիա՝ 1:5
- Լիտվա - Սլովենիա՝ 2:2
- Սլովակիա - Անգլիա՝ 0:1

ՄԵՍԻՆ ԿԱՐՈՂ Է ՎԻՐԱՀԱՏՈՒԵԼ ԵՒ ԲԱՑ ԹՈՂՆԵԼ ՄԻ ՔԱՆԻ ԱՄԻՍ

«Բարսելոնայի» յարձակուող Լիոնէլ Մեսին կարող է բաց թողնել նախատեսուածից աւելի երկար ժամանակահատուած:

Marca-ի համաձայն՝ Արժենթինայի հաւաքականի աւագի մօտ կարող է վիրահատութեան անհրաժեշտութիւն լինել: Այդ դէպքում նա կարող է բաց թողնել մի քանի ամիս:

Յիշեցնենք, որ Մեսին վերջերս վերադարձել էր Արժենթինայի հաւաքական եւ յաղթական կոլ խփել Ուրուգուայի դէմ աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական խաղում: Այդ հանդիպումից յետոյ նա վնասուածքի պատճառով լքեց ազգային թիմի ճամբարը եւ վերադարձել է «Բարսելոնա»:

մասնակցում է ռեկորդային թուով մարզիկներ՝ 33 հոգի, այդուհանդերձ, նրանցից երկուսն այդպէս էլ ասպարէզ դուրս չեկան: ՀԱՕԿ-ի քարտուղարն ասաց, որ պատճառը վնասուածքներն են եղել: «Վնասուածքներ են եղել, որոնց մասին մեր մարզիկներն ու մարզիչները, այսպէս ասած, թաքցրել են, դա մենք յետագայում աւելի մանրակրկիտ կը քննարկենք, մեր գործկոմի նիստից յետոյ այդ հարցերին եւս կը պատասխանենք», - ասաց Հրաչեայ Ռոստոմեանը:

20-ամեայ դադարից յետոյ Ռիոյի օլիմպիական խաղերում Հայաստանի համար ոսկէ մետալ նուաճեց ըմբիշ Արթուր Ալէքսանեանը, ով մարզում է կիսաւեր մարզադպրոցում: ՀԱՕԿ-ի գլխաւոր քարտուղարն ասաց, որ այդ մարզադպրոցը Գիւմրիի տեղական մարմինների վերահսկողութեան ներքոյ է, իսկ օլիմպիական կոմիտէն, յաջորդ տարի Հայաստանի սպորտային մայրաքաղաքում կը բացի նոր մարզական կեդրոն՝ «Գիւմրիում այժմ կառուցուած է ժամանակակից մարզական տրոն, որտեղ լինելու են ըմբշամարտի, բռնցքամարտի, ծանրամարտի, սամբօ-Չիլդրոյի կենտրոններ»:

Մամուլում քննարկման առարկայ էր դարձել նաեւ 31-րդ օլիմպիական խաղերին ծանրամարտի Առաքէլ Միրզոյեանի մասնակցութիւնը, ով իր ելոյթներն այդպէս էլ աւարտին չհասցրեց: Նոյն քաշային կարգում հանդէս եկող Ադասի Ադասեանն իր ֆէյսպուքեան էջում գրել էլ, որ 85 կգ քաշային կարգում ինքն է լաւագոյնը, իսկ Միրզոյեանը օլիմպիական խաղերին մասնակցելու հնարաւորութիւն է ստացել անարդար պայքարի շնորհիւ: Նշենք, որ Առաքէլ Միրզոյեանի հայրը օլիմպիական ախոյեան Օզաէն Միրզոյեանն է: ՀԱՕԿ-ի գլխաւոր քարտուղարն այսօր ասաց, որ իրենք «ծանօթ-բարեկամ» սկզբունքով բարցրեցին լուծում, պարզապէս Միրզոյեանն աւելի լաւ հնարաւորութիւններ ունէր՝ «Առաքէլի մօտ պրոգրես կար...»:

Հայաստանի Օլիմպիական կոմիտէի գլխաւոր քարտուղարի գնահատմամբ, Ռիոյի օլիմպիական խաղերը շատ թերի էին կազմակերպուած՝ խնդիրներ կային անվտանգութեան հետ կապուած, որոշ դէպքերում էլ՝ մարզական համալիրների շինարարութիւնն աւարտուած չէր:

Հայ օլիմպիականների պարգևատրումը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 18-ին, բացի պետութեան կողմից տրուելիք պարգևներից, մեդալակիր մարզիկներին, ըստ ՀԱՕԿ-ի գլխաւոր քարտուղարի, անակնկալ կը մատուցի նաեւ Օլիմպիական կոմիտէի ղեկավար Գագիկ Մառուկեանը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 21-Ապրիլ 19**
 Երկար ժամանակ է վեր կապ չէս պահած բարեկամի մը հետ, օգտուէ արձակուրդէդ եւ հանդիպում մը ծրագրէ անոր հետ: Անձկանօք լուրի մը կը սպասես որ կրնայ վճռական հանգրուան մը ըլլայ կեանքիդ մէջ: Բախտաւոր թիւերդ են: 1,19,24,31,35

ՑՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
 Միշտ վախով եւ զգուշութեամբ կը մօտենաս դիմացիմիդ եւ կը խորհիս թէ ան կրնայ քեզ դաւաճանել: Մասնագիտութիւնդ օգտագործելով լաւ ապրուստ մը կրնաս ապահովել քեզի եւ ընտանիքիդ: Նոր գործի առիթ մը պիտի ներկայանայ: Բախտաւոր թիւերդ են: 8,15,24,34,35

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
 Մարդիկ կը փնտռեն ծառայելու անոնց, որովհետեւ պարզապէս կը սիրեն այդ ծառայութիւնները: Ինքզինքդ կարգապահութեան ենթարկելու ես եւ հաւատարիմ մնալու ես: Մի բարկանար երբ ակնկալութիւններդ չյաջողին: Բախտաւոր թիւերդ են: 7,19,20,27,34

ԽԵՑՊԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Ինչ պատճառով ալ ըլլայ, թոյլ մի տար որ քեզ անհանգստացնող մտածումներդ քեզ տանին դէպէ վար, քանի որ անոնք կարելոր են նկարագրիդ ձեւաւորման համար: Զգայուն ըլլալուդ՝ հեռու կը մնաս շրջանակներէ: Բախտաւոր թիւերդ են: 9,16,26,30,33

ԱՌԻԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Միշտ կ'աշխատիս բաց ըլլալ իրականութիւններու առջեւ եւ կը սիրես փորձել նորութիւններ: Խոր մտածումներու մէջ ինկած ես լուծելու ընտանեկան հարց մը: Վստահութիւնդ մի կորսնցնէր գործակիցներուդ հետ: Բախտաւոր թիւերդ են: 2,18,24,26,30

ԿՈՅԱ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Սիրտդ լեցուն է ներութիւններով եւ կ'ուզես մէկու մը հետ խօսելով պարպես մէջիդ մտահոգութիւններդ: Դեռուէն ազգականի մը հիւանդութեան տխուր լուրը պիտի ստանաս: Զգարմանս, երբ յանկարծ իրողութեան մը առջեւ գտնուիս: Բախտաւոր թիւերդ են: 3,11,20,24,33

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Առանց պատճառի կը պոռթկաս եւ կը ջղայնանաս: Մտային եւ զգացական ներուժդ ամբողջութեամբ տրամադրած ես անպէտք հարցերու վրայ, ժամանակդ մի վատներ այլ օգտագործելու գայն կեանքդ վայելելու: Բախտաւոր թիւերդ են: 8,17,23,34,35

ԿԱՐԻՃ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Ըմբոստութեանդ պատճառաւ առած որոշումներդ միշտ ձախողութեամբ պիտի աւարտին, հանդարտ եղիր եւ մի աճապարեր: Օրէնքներուն եւ կարգ ու կանոններուն լաւ հետեւէ կանխելու սխալ արարքներդ: Բախտաւոր թիւերդ են: 1,16,22,33,34

ԱՂԵՂՆԱԲՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
 Բնութեան գեղեցկութիւնը վայելել շատ կը սիրես եւ միշտ դուրսերն ես: Ներդաշնակ եւ խաղաղ կեանք մը ունիս կողակիցիդ հետ: Ընտանիքիդ մէջ յաւելում մը պիտի բարեփոխէ բոլոր կենցաղդ: Բախտաւոր թիւերդ են: 3,13,23,27,29

ԱՅԾԵՂՁԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
 Մեծ փոփոխութիւն մը կեանքէդ ներս ուրախութիւն կը պատճառէ քեզի: Լաւ լուրերու սպասէ եւ սակայն համբերող եղիր: Կարծիքներդ յաճախ փոխանակէ կողակիցիդ հետ, որպէսզի որոշումներդ միասնաբար առնուին: Բախտաւոր թիւերդ են: 14,19,23,25,32

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 18**
 Մեծ կարօտով կը յիշես անցեալը եւ հաճելի ժամերը, որ անցուցիր սիրելիներուդ հետ: Տակաւին շատ մը նոր յիշատակներ պիտի ունենաս՝ քանի կեանքդ տակաւին կը շարունակուի: Քեզի չարիք մտածողին բնաւ մի մօտենար: Բախտաւոր թիւերդ են: 2,11,14,27,33

ԶՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
 Տկարները բնաւ մի շահագործող թու բարիքներուդ համար: Գործիդ մէջ ճշդապահութիւն կը պահանջուի քեզմէ, պէտք է հետեւիս կանոններուն: Երկար ճամբորդութիւն մը կ'ուզես ծրագրել սակայն պայմաններդ չեն ներդր: Բախտաւոր թիւերդ են: 8,16,20,21,34

Ռուսաստանէն Արտաքսած են

Շարունակուած էջ 6-էն

ձագանքելով դիտարկման՝ հնարաւոր է, որ Ստեփան Գրիգորեան արտաքսուած քաղաքական դրդապատճառներ ունի, ինչպէս կը կարծէ ինք՝ Գրիգորեանը, դեպքանատան խօսնակն յայտնեց՝ երբ ունենան լրացուցիչ տեղեկութիւններ, այդ ժամանակ եւս կը յայտարարեն, թէ ինչով պայմանաւորուած է Ռուսաստանի իշխանութիւններուն որոշումը:

Արձագանքելով Ռուսաստանէն իր գործընկերոջ արտաքսելու փաստին, Գիւմրիի «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեան «Ազատութեան» հետ ունեցած զրոյցի ընթացքին նշեց, որ Ռուսաստանի իշխանութիւններն՝ Գրիգորեանը, անցանկալի անձ յայտարարած են, հաշուի առնելով Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան ուղղուած՝ անոր քննադատութիւնները: Բարսեղեանի համոզմամբ, Ռուսաստանի «սեւ ցուցակ»ին մէջ Հայաստանի այլ քաղաքացիներ եւս կան՝ անոնք, որոնք երբեք քննադատական խօսքեր արտայայտած են այդ երկրի իշխանութիւններուն հասցէին:

Ռուսաստանէն արտաքսուած Ստեփան Գրիգորեան 1995-2000 թուականներուն աշխատած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ, Ռուսաստանի ՀՀ դեսպանութեան մէջ ղեկանադիտական բարձր պաշտօն վարած է, գրագահեաւար հանդիսացած է ՀՀ ներկայացուցիչ ՀԱՊԿ-ի մէջ: Վարած է նաեւ արտաքին գործերու նախարարի խորհրդականի պաշտօն:

ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 8-էն

առաջին դասարանի աշակերտներուն իրենց դասարանը՝ որպէս առաջնորդ եւ օրինակելի վարժարանի փոքրերուն:

Նոյն օրուան, Սեպտեմբեր 6-2016ի երեկոցեան տեղի ունեցաւ մանկապարտէզի ծնողք ուսուցիչ հանդիպումը, որու ընթացքին ծնողները իրենց գաւակներու դասարաններուն մէջ հաւաքուելով՝ հանդիպեցան դաստիարակ ուսուցիչներուն, ծանօթացան անոնց հետ եւ իրազեկ դարձան տարեկան ուսումնական ծրագրին եւ դասաւանդման դրութեան եւ միջոցներուն: Ծնողները նաեւ առիթ ունեցան շրջագայելու Մանկապարտէզի զոյգ շէնքերը, խաղաղալրերը, որոնք արդէն պատշաճ եւ յարմարագոյն ձեւով կահաւորուած եւ զարդարուած էին: Յիշեցք որ հանդիպման ներկայ էին վարժարանիս Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա եւ փոխ տնօրէնուհի Տիկ. Սոնա Գազանճեան:

Սեպտեմբեր 9 2016-ի երեկոցեան պիտի կայանայ 1-4-րդ դասարաններու աշակերտներու ծնողական հանդիպումը, եւ նոյն ամսուան 16-ին տեղի պիտի ունենայ 5-8-րդ դասարաններու աշակերտութեան ծնողներու տնօրէնութեան եւ ուսուցչական կազմի հետ առաջին հանդիպումը: Ծանօթանալու համար անոնց տարեկան ծրագիրներուն եւ ուսուցիչներու գործելաձեւին, ուր մեծ յոյսերով եւ առաջադրութեամբ եկող ծնողներ պիտի տեղեկանան վարժարանի մասին եւ գոհացում պիտի տան իրենց հետաքրքրութիւններուն:

Արդարեւ Հայ Քոյրերու վարժարանը սեպտեմբեր 6 2016ին հանգամանօրէն, մեծ խանդավառութեամբ եւ յարատեւելու վճռականութեամբ սկսաւ 2016-17 տարեշրջանը, նոր յոյսերով եւ ակնկալութիւններով նոր մարտահրաւէրներով եւ յանձնառութեամբ իրականացնելու եւ նուաճելու համար որոշուած նպատակները հասնելու նոր յաղթանակներու:

ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շարունակուած էջ 8-էն

Եւ թէրի Պէզճեանները այցելութիւն մը տալով Մերտինեան վարժարանին՝ առիթը ունեցան շրջելու նորակառուց «Պէզճեան» շէնքի սենեակները եւ մեծապէս գնահատեցին տարուած բծախնդիր աշխատանքը:

Յիշեցնենք, որ նոր շէնքի սենեակներէն ոմանք արդէն իսկ կը կրեն առանձին նուիրատուներու անուններ. մնացեալ սենեակները կը սպասեն նոր նուիրատուներու, որոնց փափաքին պատրաստ ենք ընդառաջելու մեծ հաճոյքով: Այս ուղղութեամբ յաւելեալ տեղեկութեանց համար, կարելի է հեռաձայնել հոգաբարձական կազմի ատենապետ դոկտ. Վահէ Նալպանտեանին՝ 818-507-9848 թիւով, կամ՝ կազմի անդամ տղայի, Իվան Շնորհօքեանին՝ 412-759-2020 թիւով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

մութիւնը կրկնուած է, բայց մենք շատ խելօք ազգի վարկանիշ ունենալով, պատմութեան դասերից խելամիտ հետեւութիւններ չենք անում...

Թումանեանը վերցրել է ծննդավայրի գարմանահրաշք բնութեան իմաստութիւնն ու խորութիւնը, զարգացրել իր աշխարհայեացք եւ իմաստաւորել բնութեան գաղտնիքներն ու խորհուրդը եւ դրանք արտացոլել իր ստեղծագործութիւններում՝ իհարկէ հրաշալի ուսումնասիրելով

նաեւ հայրենիքի թշուառութիւնը եւ միամիտ ու խորամանկ մարդկանց, ինչպէս նաեւ իր գրչակից ընկերներին: Նրա ստեղծած «Վերնատուն»-ը հայ ստեղծագործ մտքի հաւաքատեղին էր՝ հոգեւոր կենտրոնը...

Թումանեանը կարճ ապրեց, բայց մեր գրականութիւնն այնքան հարստացրեց ու իմաստաւորեց, այնքան պարզութիւն մտքեց, որ իր հաստատուն տեղը գրադարանի համաշխարհային գրականութեան ներկայացուցիչները շարքում իր ազգային մտածողութեամբ ու իր պարզ, բոլորի համար ըմբռնելի ու հասկանալի փիլիսոփայութեամբ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ




ԱՆԴՐԱՆԻԿ ՆՈՐԱՇԽԱՐԵԱՆ

Հանգուցեալ ԱՆԴՐԱՆԻԿ ՆՈՐԱՇԽԱՐԵԱՆԻ (մահացած Լիբանան) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Սեպտեմբեր 18, 2016ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
Քոյրերը՝ Արաքսի Նորաշխարհեան - Գասպարեան
Աստղիկ Նորաշխարհեան - Նոխուսեան
Քրոջ զաւակները Վահէ եւ Հայկուշ Յովսէփեան եւ զաւակունք
Շահնուր եւ Անի Յովսէփեան եւ զաւակունք
Շանթ եւ Լարա Յովսէփեան եւ զաւակունք
Վիզնի Յովսէփեան
Խաժակ Յովսէփեան
Յարութ եւ Անի Գասպարեան

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հանգուցեալ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Սեպտեմբեր 18, 2016ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
Այրին Արաքսի Նորաշխարհեան - Գասպարեան
Զաւակը Յարութ եւ Անի Գասպարեան
Թոռները՝ Հրակ եւ Հերա Գասպարեան
Էլի եւ Ժանօ Կարոյեան

ներուն համար, սակայն Պալաքեանի լուծումը եղած է հաւատարմութեան ու կառչիլ այն գաղափարին, որ հայութեան գոհաբերութիւնը ի գուր եղած էր:

Գասախօսութեան հետեւող հարց ու պատասխանի բաժնին մէջ, լսարանի մէկ անդամը դիտել տուաւ, որ Պալաքեանի գործածած նահատակութեան լեզուն (հայերը մեռան, որպէսզի հայկական պետականութեան հաստատումն ու ծաղկումը կարելի դառնային) տակաւին կը յամենայ հայկական ընկե-

րութեան մէջ այսօր, ինչ որ բացայայտ դարձաւ 2015ի հարիւրամեակի ոգեկոչումին ընթացքին: Համաձայնելով այս նկատողութեան հետ, փրոֆ. Գալցոլարի հաստատեց, որ ցեղասպանութեան ետին նպատակ մը գտնելու փորձերը անօգուտ են, որովհետեւ դէպքը ինքնին անիմաստ էր: Այնուհետեւ, քննարկուեցաւ հայկական համայնքներու նսեմացումի երեւոյթը, որ աղէտը կը ներկայացնէ «սպառօղական» կերպով, անգիտանալով դէպքին խորութիւնը, ինչպէս նաեւ արմատներն ու հետեւանքները:

ԱՄԵՆ ԻՆՉ ԸՆԵԼ

Շարունակուած էջ 7-էն

ուել, կարողանանք լուծել նրանց կեցութեան, աշխատանքի, ուսման, սոցիալական հարցերը:
Իմ խնդրանքն է գերատեսչութիւնների, կազմակերպութիւնների ու կառույցների ղեկավարներին՝ սրտացաւօրէն վերաբերուել ու սպառնիչ, ուղղորդող պատասխաններ տալ սիրիահայերի դիմումներին, նամակներին, խնդրանքներին: Մեր

բոլորի խնդիրն է՝ ամէն ինչ անել, որպէսզի նրանք Հայրենիքում հաստատուեն, արագ ինտեգրուեն: Ու նաեւ վստահ եմ, որ եթէ իւրաքանչիւր խոշոր կառույց կարողանայ մէկ սոցիալական տուն կառուցել սիրիահայերի համար, շատ մեծ օգուտ կը լինի: Պէտք է շարունակենք միասին աշխատել: Շնորհակալ եմ կատարուած աշխատանքի համար», - աւելցուց Սփիւռքի նախարարը:

ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐԸ՝ ԴԵՍ ԱՌ ԴԵՍ ՄԵԾ ԵՂԵՈՒՆԻՆ

Շարունակուած էջ 14-էն

մելի» գիրք մը պէտք է գրէր: Տարագրութեան ժամանակ ան ձգտած էր որչա՞ք մնալ՝ իր տեսածին պատմութիւնը յետագային գրելու համար, ու հետեւաբար գիրքը արդէն մարմին առած էր իր մտքին մէջ, մինչ ոճիրն ու զազանութիւնը տեղի կ'ունենար իր շուրջ: Այսպէսով, Պալաքեան մեծ ճիգ թափած է իր յիշողութեան մէջ ամբարելու բոլոր տեսածները՝ այդ յուշերը աւելի ուշ պատմելու համար: Ասիկա կը յիշեցնէ Ողջակէզի վերապրող իտալացի հրեայ Փրիմօ Լեւին, որ նոյնպէս պնդած է, թէ իր գիրքը մտքին մէջ գրած էր՝ համակերպող նացիստի ճամբարները եղած ժամանակ: Փրոֆ. Գալցոլարի նոյնպէս բաղադատական մը ըրաւ Կուլակի վերապրող Վարլամ Շալամովի հետ, որ աշխատանքային ճամբարներու կեանքին մասին գրած է: Վերջինս ըսած է. «Այն տպաւորութիւնը ունէի, թէ այս գիրքը արդէն իմ միտքս էր, երբ Կուլակը կը գտնուէի»:

Այս գրագէտները՝ Հայկական Յեղասպանութենէն մինչեւ Ողջակէզն ու ստալինեան սարսափները, իրենց փորձառութիւնը թուղթին փոխանցելու ծանրագոյն աշխատանքը դիմագրաւած են, որպէսզի ընթերցողը կարողանայ տեսնել անոնց աչքերուն միջոցով: Ի դէպ, գրագէտները տարբեր առիթներով նշած են այս փորձառութիւններուն պարզապէս անպատմելի բնույթը: Լեւի կը նշէ, թէ բառեր ունինք այս աղէտներուն ընթացքին ժողովուրդներու կրած չարչարանքները նկարագրելու համար, բաց անոնք չեն կրնար չափել նման փորձառութիւններու խորութիւնը: Պալաքեան միեւնոյն զգացումը կ'արտայայտէ, երբ կ'ըսէ, թէ կը զգար, որ կը մոռնար իր մայրենի լեզուն գրի առնելու ատեն, քանի որ բառերը իր միտքը չէին գար, կամ այլապէս՝ անբաւարար էին վայրագութեան էութիւնը արտայայտելու համար: Նաեւ առկայ էր այն վախը, թէ այս գրագէտներուն

վկայութիւնները վերապահութեամբ պիտի դիմաւորուէին իբրեւ չափազանցուած խօսքեր, որոնց հաւատք կարելի չէր ընծայել: Գրագէտին մեծ խնդիրը այն է, որ ան չի կրնար նման դէպքերու ընդհանրութիւնը արտայայտել, քանի որ միայն զանոնք փորձընկալող վկան կրնայ անոնց ամբողջութիւնը ընդգրկել:

Այս գրագէտներուն միջեւ հասարակաց ուրիշ գիծ մը անոնց ընկալումն էր, թէ ի՞նչ էր իրենց գրածը: «Ժողովուրդի մը հոգեվարք» ի ներածականին մէջ, Եսայեան գրած է, թէ «սրբապղծութիւն համարեցի գրականութեան նիւթ դարձնել ամբողջ ժողովուրդի մը օրհասական տառապանքը», եւ հետեւաբար իր գործին մօտեցած է «պարզութեամբ եւ ակնածանքով»: Օտեան նմանօրինակ զգացումի մը արձագանգը դարձած է, ընտրելով գրել ամենապարզ կերպով, զոր Գրիգոր Պըլտեան կոչած է «պարզութեան քաղաքականութիւնը», մինչ Շալամով հաստատած է. «Կը փորձեմ գրել ո՛չ թէ պատում մը, այլ բան մը, որ գրականութիւն չէ»:

Փրոֆ. Գալցոլարիի դասախօսութեան վերջին մասին կիզակէտը Պալաքեանն էր, որ փորձած էր վերանորոգել հին հայ գրական աւանդութեան բնորդը: Արդարեւ, տառապանք եւ համբերութիւն նահատակութեան ժամանակ հայկական ինքնութեան հիմնական տարրեր էին Պալաքեանի համար, որ յարաբերութիւն մը հաստատած էր մահուան (նահատակութեան) եւ հաւաքական փրկութեան միջեւ: Ան գոհերը բնութագրած էր իբրեւ քրիստոսանման կերպարներ, որոնք խաչուած էին իբրեւ գոհ՝ հայ ժողովուրդի ապագայ բարգաւաճումին, զոր կապած էր Հայաստանի Հանրապետութեան հաստատումին հետ: Պալաքեան աշխատած է իմաստաւորել եղեռնագործութիւնները, կարծէք թէ ոչ առանց պատճառի եղած ըլլային: Ասիկա մարտահրաւէր մըն էր բոլոր գրագէտ-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----³

Tel:----- Email:-----

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՓԱՌԱՏՕՆ ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION



SUNDAY SEPTEMBER

18, 2016

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am



GENERAL SPONSOR

INNOVATIVE

Designs Manufacturing, Inc.
By TED & NORA KOROGHLIAN

SPONSORS



Hagop Alajajian Chiropractic Corp
815 E Colorado St Ste 250
Glendale, CA 91205

GEORGIA & SOFIA ENTERPRISES Inc.
13027 Aetna St.
Van Nuys CA 91401



Harma Maghakian
Residential Design



SALON DIORO
WESTFIELD FASHION SQUARE,
14006 RIVERSIDE DR,
SHERMAN OAKS, CA 91423



Live Music

Dancing

Art Work Exhibition

Kids Games

Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ

ԵՒ ԳԻՐԶԵՐՈՒ ՎԱՃԱՌԻ

ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

To reserve your vendor booth

please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938

